№ 5 (96) IX ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1899

"Droschak".
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse : Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ՀԱՅԱՍՏԱՆ եւ ՄԱԿԵԴՈՆԻԱ

Déclaration adressée à l'opinion publique du monde civilisé à l'occasion de la Conférence de la Paix

par la Fédération Révolutionnaire Arménienne et le Haut Comité Macédonien.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԿՈՄԻՏԷԻ

ՈՒՂՂՈՒԱԾ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻՆ՝ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻՒ

Au nom des grands principes de Justice et d'Humanité une conférence internationale est convoquée à la Haye, dans le but de jeter les larges fondements de la Paix universelle.

Victimes de la plus grande iniquité politique du siècle — malgré le scepticisme cruel qui se dégage de notre sanglante histoire, — nos peuples auraient pu espérer que la conférence de la Haye, fidèle à la mission humanitaire, dont elle s'est proclamée l'organe collectif, s'occuperait de leur sort, ce projet de la Paix ne pouvant évidemment être réalisé que par la solution équitable des questions brûlantes créées par le triomphe de la force brutale.

Cependant, obéissant à des considérations, dont la logique repose sur une flagrante violation des généreux principes qui ont motivé sa convocation, la conférence a résolu d'exclure du programme officiel de ses travaux, la solution de notre question, menace perpétuelle de la Paix, tout en se réservant le droit de légaliser tacitement un état de chose, dont la sanction équivaudrait à une sentence de mort prononcée sciemment sur l'existence de nos peuples si éprouvés....

Devant cette attitude provoquante de la conférence de la Haye, unis par les mêmes malheurs et par le même besoin de nous défendre, si nous élevons aujourd'hui la voix, ce n'est point pour étaler nos souffrances aux yeux du monde civilisé, ni pour plaider la cause de notre émancipation. L'éclat tragique de notre sort nous délivre de la douloureuse obligation d'énumérer les horreurs de notre situation ; quant à la cause de notre liberté, elle est gagnée depuis longtemps devant le tribunal de la conscience sociale de l'humanité. Nous élevons la voix uniquement pour dénoncer cette véritable conspiration juri-

Արդարութեան և Մարդկայնութեան մեծ սկզբունքներու անունով միջազգային խորհրդաժողով մը գումարուած է Լահէ, տիեզերական Խաղաղութեան լայնանիստ հիմերը դնելու նպատակով։

Մեր ժողովուրդները, դարուս քաղաքական ամենէն մեծ անիրաւութեան զոհերը, կարող էին յուսալ — հակառակ այն դաժան սկեպտութեան որ կը բխի մեր արիւնոտ պատմութենէն — թէ Լահէի խորհրդաժողովը, հաւատարիմ իր մարդկայնական առաքելութեան, որուն հաւաքական բերանը հռչակած է ինքզինքը, պիտի զբաղէր անոնց վիճակով, որովհետև Խաղաղութեան այդ ծրագիրը արդարև պիտի կրնար իրագործուիլ միայն արդար լուծումովը այն հրատապ խնդիրներուն, որոնք ստեղծուած էին բիրտ ուժին յաղթանակովը։

Սակայն, հնազանդելով այնպիսի նկատումներու, որոնց տրամաբանութիւնը կը յենուի իր գումարումին պատճառ եղող վսեմ սկզբունքներու բացայայտ բռնաբարումին, խորհրդաժողովը որոշեր է իր աշխատանքներու պաշտօնական յայտագրէն դուրս ձգել Խաղաղութեան մշտական սպառնալիքն եղող մեր խնդրին լուծումը, իրեն վերապահելով միանգամայն իրաւունքը լռելեայն օրինաւորելու իրերու կացութիւն մը, որուն վաւերացումը հաւասարազօր պիտի ըլլար մեր այնքան տանջուած ժողովուրդներու գոյութեան դէմ գիտակցաբար արձակուած մահավճռի մը. . .

Լահէի խորհրդաժողովին այդ գրգռիչ դիրքին հանդէպ, եթէ մենք՝ միացած նոյն աղէտներով և մեզ պաշտպանելու նոյն պէտքով՝ կը բարձրացնենք այսօր մեր ձայնը, ցուցադրելու համար չէ քաղաքակիրթ աշխարհին աչքերուն առջև մեր տառապանքները և ո՛չ ալ մեր ազատութեան դատը պաշտպանելու համար։ Մեր վիճակին եղերական հռչակը կ'ազատէ մեզ մեր կացութեան արհաւիրքները թուելու կսկծագին պարտականութենէն. գալով մեր ազատութեան դատին, ան շատոնց արդէն շահած ենք մարդկութեան ընկերային խղճմտանքի ատեանին առջև։ Մենք ձայներնիս կը բարձրացնենք միայն մատնանիշ ընելու համար դատաստանական այդ

dique, qui se forme contre nous sous le manteau éclatant des principes solennels, et pour déclarer devant l'opinion publique éclairée du monde, que les décisions de la conférence de la Haye seront, à nos yeux, dépourvues de tout caractère d'obligation, tant que nos deux peuples martyrs gémiront sous un régime barbare et perfide, flétri par les voix les plus éminentes comme une tache ignoble à l'éclat de notre civilisation.

Notre passé sanglant, notre présent frémissant de cruautés et de profanations sans nombre, l'avenir menaçant, dans les perspectives duquel des catastrophes terribles s'ébauchent avec le calme de l'impunité, sous l'inspiration sanguinaire du Sultan, — tout nous fait de nos luttes communes un devoir sacré, auquel rien ne saurait nous empêcher d'obéir : car il y a un droit plus auguste que la volonté du plus fort, c'est le droit imprescriptible des opprimés de briser les chaînes de leur esclavage.

Peuples essentiellement pacifiques, aspirant à une existence tranquille, afin de nous livrer au calme développement de nos énergies vitales, nous aurions apprécié mieux que personne la tâche de cette conférence, si la Paix n'éveillait pas en nous la sinistre évocation des massacres encouragés et si elle n'était pas aujourd'hui la consécration solennelle d'un esclavage honteux, contre lequel le devoir impérieux de notre existence et de notre dignité nous commande de lutter jusqu'à la dernière force.

ճշմարիտ դաւադրութիւնը, որ կը կազմուի մեր դէմ հանդիսաւոր սկզբունքներու շքեղաշուք քօղին տակ, և յայտարարելու համար աշխարհի լուսամիտ հանրային կարծիքին առջև թէ Լահէի խորհրդաժողովին որոշումները հարկեցուցիչ ո՛չ և է հանգամանքէ զուրկ պիտի ըլլան մեր աչքին, ցորչափ մեր երկու նահատակ ժողովուրդները կը հեծեն խուժդուժ և նենգ ռէժիմի մը տակ, որ ամէնէն հոյակապ ձայները նշաւակեցին իբր անարգ արատ մը մեր քաղաքակրթութեան փայլին։

Մեր արիւնոտ անցեալը, անթիւ անգթութիւններով և սրբապղծումներով սարսռագին մեր ներկան, սպառնալից ապագան, որուն հեռանկարին մէջ ահռելի աղէտներ կ'ուրուագծուին անպատիժ մնալու անդորրութեամբ, սուլթանին արիւնռուշտ ներշնչումին տակ, — այդ ամէնը մեր ընդհանուր կռիւները սրբազան պարտականութեան մը կը վերածէ, որուն ոչինչ պիտի կրնայ մեզ արգիլել հնազանդելու. որովհետև կայ իրաւունք մը ամէնէն հզօրին կամքէն աւելի վեհ, անբռնաբարելի իրաւունքն է ատ ճնշուածներուն իրենց ստրկութեան շղթաները խորտակելու։

Էապէս խաղաղասէր ժողովուրդներ ըլլալով, տենչալով հանգստաւէտ գոյութեան մը, նուիրելու համար մեզ մեր կենսական կորովներու հանդարտ զարգացմանը, մենք ամէնէն աղէկ կրնայինք գնահատել այդ խորհրդաժողովին ընելիքը, եթէ միայն Խաղաղութիւնը չզարթեցնէր մեր մէջ քաջալերուած ջարդերուն չարաշուք վերյուշումը, եթէ ինք հանդիսաւոր սրբագործումը չըլլար ամօթալի ստրկութեան մը, որուն դէմ կը հրամայեն մեզ կռուիլ մինչև վերջին շունչը, մեր գոյութեան և մեր արժանապատուութեան անդիմադրելի պարտականութիւնը։

Այս յայտարարութիւնը Դաշնակցութեան եւ Մակեդոնական Գերագոյն կոմիտէի կնիքներով վաւերացուած, յունիս 3 | 16-ին ցրուել տրուեցաւ քոլոր կարեւոր լրագրերուն, Լահէի վեհաժողովին անդամակցող պատուիրակութիւններու պետերուն եւ վեց մեծ պետութիւններու դահլիճներուն։

ԱՄԲՈԽԱՑԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

„Եթէ կարելի լինէր ենթադրել, որ տաճկական վարչութիւնը այսպիսի ծգնաժամում (1876, սեպտեմբեր) կարող է Նուրօպայի համաձայնութեամբ կամ նրա վաւերացմամբ շարունակել իր օրինական գոյութիւնը Բոլղարիայում, այդ դէպքում պէտք է յանցանք համարել մարդկային արդարադատութեան ամէն մի բողոք իշխանութիւնը իշխողը գործ դնելու դէմ, ամէն մի ընդդիմադրութիւն ամենազազրելի բռնապետութեան դէմ։ — Բայց մենք դեռ չենք հասել այդ տեսակ ծայրայեղ ստորացման“...

Վ. ԳԼԱԴՍՏՈՆ

I

Ամբոխը, կազմուած լինի նա „կրթուած“ թէ անկիրթ մարդկանցից, միշտ տրամադիր է կարծելու, թէ ամէն մի երևոյթ, որին հետևում է մի ուրիշը՝ անմիջական պատճառ է այդ հետագայ երևոյթի։

Այդ է ամբոխի տրամաբանութիւնը և միայն այդ տրամաբանութեամբ կարելի է բացատրել հայոց հասարակութեան որոշ շրջաններում տարածուած այն անհեթեթ կարծիքը, թէ հայ յեղափոխականներն են հայկական սոսկալի կոտորածների իսկական պատճառը։ „Post hoc, ergo propter hoc“ — „Այս դէպքից յետոյ, ուրեմն այս դէպքի պատճառով“ — տրամաբանեց chapeau կրող ամբոխը և հալած իւղի տեղ ընդունեց թիւրք Հերոդէսի պալատից դուրս եկած եգիպտական մեղադրանքը։ Չէ՞ որ հայկական կոտորածներից առաջ ոչ մի նորանշան բան տեղի չէր ունեցել — ոչ արևի խաւարում, ոչ գիսաւոր աստղի ծագում — ոչի՞նչ բացի յեղափոխական ցոյցերից։ Ինչ կասկած, ուրեմն, որ այդ ցոյցերը եղան մեր կորուստների պատճառը. թող անիծեալ լինեն այդ ցոյցերը, թող կորչեն յեղափոխականները. — խօսում է մարդկային յիմարութիւնը կամ անսրտութիւնը, — և ահա, ձեր առաջ ներկայանում է մի երևոյթ, որ նոյնքան գարշելի է, որքան և ֆնասակար։

Այն ժամանակ, երբ դուք այնպիսի մի չարագործութեան դիմաց, ինչպիսին են հայկական կոտորածները, բռնկուած էք անսահման ցասումի սուրբ

զգացմունքով միայն. այն ժամանակ, երբ Հայութիւնը ջնջելու բացարձակ քաղաքականութեան դիմաց, դուք կարող էք ունենալ մի անընկճելի ձգտում միայն — ազատուել վերջապէս այսքան չարիքների միակ պատճառից, — ահա այդ ժամանակ, ասում ենք, ձեր շուրջը, այս ու այնտեղ, դուք տեսնում էք հայ մարդիկ, որոնք ոտնակոխ անելով բացարձակ ճշմարտութիւնը, պատրաստ են բարին չար անուանել ու չարը բարի, պատրաստ են համարեա թէ արդարացնել մարդկային պատմութեան մէջ չտեսնուած մի բարբարոսութիւն, պատրաստ են անօրինակ բռնութեան հեղինակի մեղքը փաթաթել այդ բռնութեան դէմ կռուող բանակի վզին...

„Կորած ենք հայերս" կ'ասէինք մենք համարձակ, եթէ ականատես չլինէինք սակայն, թէ ինչպէս մի կողմից տանջուած ժողովուրդը իր մաքուր բնազդով և միւս կողմից արևելեան հարցին ծանօթ մարդիկ միանգամայն պարզ են համարում վերջին սարսափների պատճառները, և չեն ձայնակցում հայկական դպիրների ու փարիսեցիների համերգին։ Դժբախտաբար կան միամիտ մարդիկ, որոնք զուրկ են այդ բնազդից և այդ ծանօթութիւնից, ու նրանց վրայ մասամբ ազդում է այդ հակայեղափոխական երկդիմի քարոզը։ Վերջապէս հէնց այդպիսի քարոզի գոյութիւնը ինքն ըստ ինքեան, — հէնց այն փաստը, որ Աբդիւլ Համիդի անթիւ զոհերի անարժան եղբայրները, մոռացած սուրբ վրէժը, կրկնում են այդ գահակալ դահիճի և նրա արբանեակների զրպարտութիւնը, — այնպիսի ամօթաբեր երևոյթ է մեզ համար, որ մենք ստիպուած ենք ներկայ յօդուածով կրկին և կրկին դառնալ այդ անհեթեթ մեղադրանքին։

—

Բայց թող առաջ եւրոպացի հեղինակները խօսեն։ „Սուլթան և պետութիւններ" իր յայտնի գրքի մէջ՝

„Կոտորածները, գրում է Մակ-Կոլ, սուլթանների աւանդական քաղաքականութիւնն են կազմում եւ վերջին վաթսուն տարիների ընթացքում կրկնուել են միջին թւով ամէն 10 տարին մի անգամ... բռնութեան օրէնքի կանոնաւորութեամբ....

„.... Ամէն անգամ, երբ քրիստոնեաները հնայելով իրենց անօգնութեան, սկսում էին գերազանցել միւսիւլմաններին քանակութեան, կրթութեան եւ բարեկեցութեան կողմից, մահմէդական իշխանները, հետեւելով փառաւոր քաղաքականութեանը դէպի ըստրուկ իսրայէլացիները, նուազեցնում էին ազգաբնակութիւնը Բուլղարիայի եւ Սասունի սիստեմով....

„... Տաճիկ ցեղը, ինչպէս ճիշդ նկատում է Նասաու Սէնեօր, արագ կերպով ջնջւում է. տաճիկ կինը շատ հազիւ դէպքում է ունենում աւելի քան երկու երեխայ... Տաճիկները գիտակցում են, որ իրենք ջնջւում են եւ չեն կարող մրցել քրիստոնեաների հետ հաւասար պայմաններում, — դրանով են բացատրւում քրիստոնեաների անընդհատ ճնշումները եւ պարբերական կոտորածները, որոնք միակ միջոցն են յետաձգելու տաճիկների տիրապետութեան վերջը".

„...Սուլթանը, գրում է նոյն հեղինակը մի ուրիշ տեղ, սկսել է իր սխրագործութիւնները Սասունից, եւ եթէ ռէֆօրմների ծրագիրը չլինէր, դուցէ այդ կոտորածը առ ժամանակ յագեցնէր նրա արիւնռուշտ սիրտը. բայց ռէֆօրմների հիմքում դրուած է հայերի եւ միւսիւլմանների թւի յարաբերութիւնը, ուստի նա վճռեց խանգարել այդ ծրագրի իրագործումը, հակառակ կողմը փոխելով այդ յարաբերութիւնը (այսինքն նուազեցնելով հայերի թիւը)։ Այս հանգամանքը պիտի նախատեսնէին ռէֆօրմների ծրագիր կազմողները եւ ամէնից առաջ նրանք պիտի հոգային — իմանալով ում հետ գործ ունեն — միջոցներ ձեռք առնելու այդպիսի պատեհութեան դէմ... Բայց պետութիւնները ոչինչ չարին մարդասպանի ձեռքը բռնելու համար եւ հայերին կոտորելու հրամանը տուեց Եըլտըզ-քէօշկից"։

Իռլանդացի Էմիլ Դիլլօն, նախկին պրօֆէսսօր, որ 1895 թւի սկզբում Տաճկաստան մտաւ և Contemporary Review ամսագրի միջոցով առաջին ճշգրիտ տեղեկութիւնները հաղորդեց Եւրոպային Սասունի կոտորածների մասին, ասում է.

«1891 թւին Բարձրագոյն Դուռը, վախենալով, թէ լուրջ դժուարութիւններ կը ծագեն իր համար՝ Հայաստանում խոստացուած ռէֆօրմները մտցնելուց եւ թէ Ռուսիայի սահմանակից նահանգներում բնակող քրիստոնեաները կարող են օգնել Ռուսիային պատերազմի դէպքում, վճռեց մի՝ անգամից երկու նապաստակ սպանել եւ կազմակերպեց բացառապէս քիւրդերից («համիդիէ») կոչուող հեծելազօրքը։ Կառավարութեան մի քանի բարձր պաշտօնեաների առաջարկած ծրագիրն էր՝ ազատել սահմանակից նահանգները, օրինակ Ալաշկերտը՝ հայերից եւ փոխարինել նրանց մահմէդականներով, որպէսզի բոլոր հինգ նահանգներում հայերի թիւը այն աստիճան կրճատուի, որ կարեւորութիւն չունայ առանձին հայկական ռէֆօրմների եւ որ պատերազմի դէպքում քիւրդերը գործեն իբրեւ հակակշիռ կազակների։ Ջնջման այդ բացարձակ քաղաքականութիւնը այնուհետեւ ճշգրօրէն իրագործւում է ու հետզհետէ ընդարձակւում, եւ եթէ դրան վերջ չդրւի, անկասկած, այդպիսով վերջնապէս կը լուծւի հայկական հարցը»...

Նշանաւոր անգլիացի Ջէյմս Բրայսը, որի հայեացքների հետ մենք ծանօթացրինք ընթերցողներին „Դրօշակ"-ի նախորդ համարում՝ գրում է.

«1878-ի անցքերը մեծ ազդեցութիւն ունեցան թէ սուլթանի եւ թէ նրա քրիստոնեայ հպատակների վրայ։ Բուլղարիայի ազատագրութիւնը յոյս ներշնչեց կրթուած հայերի մէջ, որ Եւրոպան իրենց համար եւս կ'անէ նոյնը, ինչ որ արաւ բուլղարների համար։ Այն միտքը՝ որ հայերը Անգլիայի հովանաւորութեամբ պիտի ձգտէին մի ինքնավար Հայաստան ստեղծել, նման Բուլղարիայի, եւ որ հայերին արած այս կամ այն զիջումները կարող էին սկիզբ լինել մի այդպիսի ինքնավարութեան — այդ միտքը ամէնագլխաւոր պատճառն էր, որ մղեց սուլթանին բուլղարական սարսափները աւելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում»։

Նոյն միտքն է յայտնում և ամերիկացի միսիոնար Գրինը, որ, ինչպէս և Բրայսը, չհամակրելով հանդերձ արտասահմանեան հայ յեղափոխական կազմակերպութիւններին, պնդում է սակայն, որ „տաճիկները բա-

ականին ճարպիկ կերպով աշխատում են դարձնել հասարակութեան ուշադրութիւնը յեղափոխականների վրայ, որպէսզի կարողանան ծածկել իրենց սեփական գործողութիւնները»։ Իսկ եթէ հարցնէք՝ թէ որո՞նք են այդ «սեփական գործողութիւնները», Գրինը մատնացոյց կը լինի The Independant ամերիկեան լրագրի վրայ, ուր ասուած է.

«Այդպիսով Նէջիբ փաշան 1840 թւին (Սիւրիայի քրիստոնեաների ջարդը), Բէդէր-խանը 1850 թւին (նեստորականների եւ հայերի կոտորածները Քիւրդիստանում), Խուրշիդ փաշան 1860 թւին (մարոնիտների եւ սիւրիացոց կոտորածները Լիբանանում եւ Դամասկոսում), Շէֆիկէտ փաշան 1876 թւին (բոլղարների կոտորածը) եւ Զէքքի փաշան 1894 թւին (Սասունի ջարդը)—մէկը միւսի ետեւից ջանք են թափել մի ազնիւ եւ մարդասիրական գաղափարի վրայ,—աղատել տաճկական կայսրութիւնը քրիստոնեայ ազգաբնակութիւնից» *)։

Դառնալով հայերին՝ Գրինը՝ մի կողմից հետեւելով Բրայսին և միւս կողմից (ինչպէս ինքն էլ խոստովանում է) մանաւանդ Բօլլէն Ծակմէնին՝ — գրում է.

«Ասում են, որ հայերը իրենք իրենց դժբախտութիւնների պատճառ եղան, գրգռելով թիւրքերին։ Բայց ո՞վ գրգռեց հայերին... Նրանք տեսան, որ Բոլղարիան ազատուեց արիւնից եւ նախատական վիճակից ու ստացաւ ինքնաճանաչութեան եւ բարօրութեան ճանապարհի վրայ՝ եւրոպական պետութիւնների պաշտպանութեան ներքոյ։ Մի՞թէ կարելի՞ է զարմանալ, որ հայ ժողովրդի սրտում եւս բարձրացան յոյսեր եւ սպասելիքներ—մի ժողովրդի սրտում, որ երբեք ստոր չէ բոլղարներից եւ շատ դէպքերում աւելի տաղանդաւոր... Հայ յեղափոխական գաղափարը ներկայանում է իբր մի նոր երեւոյթ այս խաղաղ եւ դարերի ընթացքում հնազանդութեամբ տաճկական լուծը կրող ժողովրդի կեանքում։ Բայց դա բնական հետեւանք է այն սարսափելի կացութեան, որ նկատւում է Բերլինի ռաչնագրից յետոյ։ եւ այս ախտը կը դառնայ օրէցօր աւելի եւ աւելի թունաւոր, աւելի եւ աւելի վարակիչ, մինչեւ եւրոպական բժիշկները չդիմեն խիստ եւ արմատական միջոցների «հիւանդ մարդու» վերաբերմամբ»։

Մոսկվայի համալսարանի պրոֆէսոր Կոմ Լ. Կամարովսկին, յենելով արեւելեան գործերին քաջ ծանօթ յայտնի դիւանագէտ կոմս Ռէնէդէտտիի կարծիքի վրայ՝ ասում է.

«Տաճիկները համոզուելով, որ իրենց տիրապետութեան ամէն կողմից վտանգ է սպառնում այժմ դէպի քրիստոնեաները՝ բացի արհամարհանքից, նաեւ կատաղի, անողորմ ատելութիւն են տածում։ Իրենց կոյր զայրագնութեան մէջ, որ—աւելացնենք—միմիայն սատկանում է եւրոպայի անկարող եւ անվճռողական միջամտութեամբը, նրանք չեն տեսնում ուրիշ ոչ մի միջոց իրենց զօրութիւնը պահպանելու եւ սպառնացող վտանգների առաջն առնելու, բայց թէ կոտորածների միջոցով քրիստոնեաներին ջնջելը։ Այստեղից առաջ են գալիս քրիստոնեաների կոտորածները ամէն տեղ, ուր վերջիններս փորձել են դիմադրել տաճիկներին—Բոլղարիայում, Բոսնիայում, Հայաստանում, Կրէտէում եւայլն։ Այդ սիստէմը անւանւում է «խաղաղացո՛ւմ» եւ մեծահոգի փաղիշտի հայրական՝ն կառավարութեան վերահաստատում։ Այդպիսի մի կառավարութեան դիմաց մի՞թէ կարող է խօսք լինել «օրինականութեան» մասին եւ ի՞նչ տեսակ «խաղաղասիրութեամբ» կարելի է արդարացնել նրան պահպանելու ցանկութիւնը»։

Ֆրանսիական յայտնի գործիչ և գրող Ժան Ժորէսը՝ հայկական հարցի մասին պարլամէնտում արտասանած իր գեղեցիկ ճառի մէջ, դիմելով արտաքին գործերի նախարար Հանոտոյին, 1898 թւի հոկտեմբեր 3-ին, ասաց.

«Դուք մոռացաք աւելացնել... որ հայ յեղափոխականների վրայ ինչ դատաստան էլ որ կարենք—ապահովապէս նրանք գրգռիչներ (provocateur) չեղան։ Դուք մոռացաք յիշեցնել, որ նրանց պատասխանատուութիւնից առաջ, եթէ միայն նրանք ունէին այդպիսին—եւ ի՞նչ կարող է լինել մի քանի մարդկանց կամ մի քանի կոմիտէների պատասխանատուութիւնը մի ամբողջ ժողովուրդի նահատակութեան եւ կոտորածի դիմաց,—կրկնում եմ, դուք մոռացաք յիշեցնել, որ այդ մարդկանց պատասխանատուութիւնից շատ առաջ եւ նրանից էլ վեր՝ կար սուլթանի եւ եւրոպայի պատասխանատուութիւնը»։

Գերմանացի հայասէր Լէպսիուսը, որ «Հայաստան և Եւրոպա» իր գրքի վերնագրի տակ դրել է՝ «մի ամբաստանագիր մեծ պետութիւնների դէմ», մանրամասնօրէն կոտորածների հարցը քննելուց յետոյ, ասում է.

«Կրկնում ենք մեր հարցը.—ի՞նչ բան են Հայաստանի ջարդերը, եւ պատասխանում՝ դա Բարձր Դրան ձեռք առած վարչական մի միջոց է, որ ուրիշ շարժառիթ եւ նպատակ չունի, բայց եթէ հայ ազգի ընջնումը անիրագործելի դարձնել մեծ պետութիւնների պահանջած ռէֆորմները... Բայց հասկանանք իրար. ինչ որ արժանի է պարսաւանքի—դա ոչ թէ այն է, որ Եւրոպայի դիւանագէտները ուզեցին իրենց ձեռքն առնել մի խեղճ ու ջարդուած ժողովրդի դատ, այլ այն՝ որ նրանք այդ արին այնպիսի մի ձեւով, որ հայերը ստիպուեցին իրենց արիւնով վճարել նրանց քաղաքականութեան գինը»...

Միջազգային իրաւունքի հեղինակաւոր պրոֆէսոր բէլգիացի Բօլլէն-Ծակմէնը իր մի աշխատութեան մէջ («Հայաստան, հայեր և դաշնագրեր») դեռ 1887 թւին, երբ ոչ մի յեղափոխական շարժման մասին խօսք չկար Եւրոպայում, գրում էր.

... «Հայկական հարցը, չնորհիւ Բերլինի դաշնագրի 6-րդ յօդուածին՝ մտաւ միջազգային դրական իրաւունքի շրջանը եւ մտաւ ոչ թէ դիւանագիտութեան քմահաճոյքով, այլ իբրեւ նախընթաց փաստերի եւ դաշինքների տրամաբանական հետեւանք։ Նոյն այդ տրամաբանութիւնը պահանջում է այժմ, որ 61-րդ յօդուածը գործադրւի։ Եթէ այս պահանջը չիրագործւի. եթէ այս շատ ընդունակ ժողովուրդը, որ ազգային գիտակցութիւն ունի եւ որի իրաւունքները հանդիսաւոր կերպով արդէն ընդունուած են, առաջւայ պէս անպատիժ հարստահարւի. եթէ տաճիկ կառավարութիւնը չկամենայ կամ չկարողանայ կատարել իր խոստումները, իսկ Եւրոպան մոռանայ յիշեցնել նրան այդ մասին,—այն ժամանակ հայկական հարցի հետ առաջին յարմար առիթում կը պատահի նոյնը, ինչ որ պատահեց ռումինական, սերբական, բոլղարական,

*) Այս շարքին աւելացնենք եւ սուլթան Մահմուդին, որ 1822 թւին առնւազը 50,000 յոյների ջարդի հեղինակն եղաւ։

ռումելական հարցերի հետ։ Դա կը լինի մէկը այն անակնկալներից, որոնք սովորաբար առաջ են գալիս անհեռատեսութեան շնորհիւ ինչպէս դիւանագիտութեան, այնպէս էլ բժշկականութեան մէջ։ Նրանք նման են այն վատ ու փոթորկալի տենդերին, որոնք — շնորհիւ այն բանի, որ սկզբում անխնամ են վերաբերւում, — յանկարծ բռնկւում են լափող եւ մահաբեր արագութեամբ»։

„Դրօշակ"-ի ծաւալը թոյլ չի տալիս աւելի ընդարձակել մեր քաղուածքները նոյն կամ ուրիշ հեղինակներից, ու մենք առայժմ ստիպուած ենք բաւականանալ այդքանով։

—

Դիմենք ուրեմն եզրակացութիւններին։ Ամփոփելով այդ կարծիքները, մենք տեսնում ենք, որ Մակ-Կոլ, Բրայս և Դիլլօն Անգլիայում, Գրինը Ամերիկայում, Կամարօվսկին Ռուսաստանում, Ժօրէսը Ֆրանսիայում, Լէպսիուսը Գերմանիայում, Րօլլէն-Ժակմէնը Բէլգիայում — միաձայն գտնում են, որ հայկական կոտորածների բուն պատճառներն են, մի կողմից՝ տաճիկ կառավարութեան գիտակցօրէն ընդունած վճիռը — նուազեցնել հայերի թիւը Հայաստանում (միանգամայն անկախ յեղափոխական շարժումներից), և միւս կողմից՝ Եւրօպայի քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ։

Այո, այդ բոլոր հեղինակները ոչ մի տարակուսանք չեն թողնում, որ սուլթանական կառավարութիւնը հայերի ջնջման ձգտելու համար ունէր աւելի խորին շարժառիթներ, քան յեղափոխական ձեռնարկներն են, ինչպէս ենթադրում է ամբոխային տրամաբանութիւնը։

Ահա այդ շարժառիթները.

Առաջին. — Հաւասար և ազատ պայմաններում տաճիկները անկարող են մրցել հայերի հետ, որոնք գերազանցում են նրանց կուլտուրայով, իրենց աճելութեան ուժով և տնտեսական յառաջդիմութեամբ։

Երկրորդ. — Հայերի մտաւոր-բարոյական վերածնութիւնը մի կողմից և տաճկական զարհուրելի ռէժիմը միւս կողմից՝ անհրաժեշտօրէն ստեղծեցին հայկական շարժում, որի հետեւանքը եղաւ հայկական հարցը, իբրև Հայաստանի ինքնավարութեան ծրագիր կամ առնուազն — պահանջ ռէֆօրմներ մտցնելու հայկական նահանգներում, որ ուրիշ ոչ մի կերպ չեն հասկանում տաճիկները, բայց եթէ Թիւրքիայի ջլատում։

Երրորդ. — Հայկական նահանգները սահմանակից են Ռուսաստանին — տաճիկների համար այդ ամենավտանգաւոր թշնամուն. խոստացուած ռէֆօրմները կարող են առիթ տալ ռուսների միջամտութեան, որ հաւասար կը լինի հայկական նահանգների գրաւման, մանաւանդ որ պատերազմի ժամանակ հայերը կարող են մեծ ծառայութիւններ մատուցանել ռուս զօրքերին։

Այդ մէկ։ Իսկ ինչ վերաբերում է միւս հիմնական պատճառին — այն է՝ Եւրօպայի քաղաքականութեան, նոյն հեղինակները միևնոյն ներդաշնակութեամբ պնդում են, որ Եւրօպան իր վրայ վերցնելով հայերի վիճակը բարւոքելու պարտականութիւնը, դրանով Թիւրքիայի ամբողջութեան կամ գերիշխանութեան առաջ բացեց երկիւղի մի մեծ դուռ, բայց միաժամանակ ոչ միայն որևէ ազդու քայլ չարաւ յօգուտ հայերի, այլև շնորհիւ իր եսամոլ, նախանձոտ ու ոճրագործ ընթացքին, միանգամայն ապահովեց Մեծ Մարդասպանին՝ իրագործելու հայկական կոտորածների դժոխային ծրագիրը...

—

Եթէ մենք ճիշդ ամփոփեցինք օտար հեղինակների մատնացոյց արած պատճառները, ապա հարցնում ենք. — ի՞նչ մաս ունին այդ պատճառների մէջ հայ յեղափոխականները, որոնց մեղադրում է այսօր ամբոխային տրամաբանութիւնը։

Միթէ՞ նրանց քարոզների շնորհիւ էր, որ հայ ժողովուրդը սկսեց գերազանցել տաճիկներին իր աճելութեան ուժով, տնտեսական յառաջդիմութեամբ, կուլտուրայով...

Միթէ՞ նրանք ստեղծեցին հայերի մէջ մտաւոր շարժում, առաջ բերին ազգային ինքնաճանաչութիւն, ազատեցին Բօլղարիան և հիմք դրեցին „հայկական հարցին"...

Միթէ՞ նրանք թշնամացրին Ռուսաստանը Թիւրքիայի հետ կամ մօտեցրին դրանց սահմանները, կպցնելով Փոքր Ասիան Կովկասին...

Միթէ՞ նրանք խրախուսեցին Եւրօպայի անտարբերութիւնը, շահասիրութիւնը, մարդակերութիւնը...

Կարծում ենք թոյլ կը տրւի մեզ պատասխանել՝ ո՛չ։ Բայց այդ բաւական չէ։ Հայ յեղափոխականները ոչ միայն մաս չունին կոտորածների այդ իսկական պատճառներում, այլև — խորին համոզմունքով պնդում ենք — նրանք իրենք, ամբողջ հայ յեղափոխական շարժումը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյնպէս մի անհրաժեշտ բնական հետեւանք միևնոյն տնտեսական ու պատմական-քաղաքական պատճառների։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

—

Արթին փաշային պատուիրակութեան ֆիասքօն. — Քէլէկեանը Լահէ. — Կովկասի գաղթականները. — Գերմանական առաքելութիւն մը դէպի Կարին. — Նոր խռովութիւններ Տարօնի եւ Վասպուրականի մէջ։

28 մայիս 1899

Եըլտըզը նորէն մղձաւանջի տակ է. հայկական խնդիրը, Թիւրքիոյ քրօնիկ հիւանդութիւններու եթէ ո՛չ ամենէն զարհուրելին, բայց ապահովապէս ամենէն խորհրդաւոր կերպով չարագուշակը, իր նօպաներով երևան եկած է քանի մը շաբաթէ ի վեր։

Համիտին համար կսկծեցուցիչ դէպքերու շղթայ մըն է, որ կըսկսի սկսած Խաղաղութեան այդ „նզովեալ" վեհաժողովէն, որուն որքան ալ ապարդիւն ելք մը կը գուշակեն Եըլտըզին արաբ գուշակները իրենց վեցհազարեակներուն կռթնած, բայց նորէն Համիտին սիրտ տալու չեն զօրեր։

Արդարութի՛ւն, խաղաղութի՛ւն — այդ բառերը որքան դատարկ և սնամէջ, բայց սպառնալիք մը միշտ ունին իրենց մթին խորշերուն մէջ թաքուն. չէ՞ որ „ընութիւնը դատարկութիւն չի սիրեր": „Գող՝ սիրտը դող" և Համիտ իր մինակութեան ժամերուն մէջ կը խորհի „Հա-

տուցումին", որ մէկ ժամէն միւսը կրնայ իր դուռն ափ առնել...

Բայց կարգով երթանք։ Այդ մտմտուքները ասկէ առաջ արդէն սկսած էին ամպել Եըլտըզի երկինքը։ Դաշնակցութեան լակօնական գրութիւնը, որով չոր ու կտրուկ Արթին փաշային առջև դնել կուտար իր „պատուիրակի բապուճները", յանկարծակիի բերաւ Եըլտըզին քաղաքագիտուկները։

Զափէն աւելի յոյսեր դրեր էին, ինչպէս կ'երևի, Արթին փաշային ճարպկութեան վրայ, այդ „դառն բաժակը" իրենցմէ հեռացնելու համար... Իրենց ապուշութիւնը հոն էր, որ կը կարծէին թէ Դաշնակցութիւնը թևերը ծալլած կըսպասէր պատնէշին վրայ, մինչև Համիտին պատգամաւորը պատասխան մը բերէր։

Եկուր տես որ ժամանակն ալ անպատեհ էր. հապա՞ եթէ յանկարծ Լահէ ժողված այդ ճաղատ ու ծըլթուած գլուխները պահ մը իրօք հաւտային թէ արդարութեան ռահվիրաններն էին իրենք, և ծուռ աչքով մը Թուրխան փաշան սկսէին հարցաքննել...

Ի՞նչ պիտի պատասխանէին այն ատեն։

— „Էֆէնտիմ, ինչե՞ր կ'ըսէք, ատանկ խնդիր գոյութիւն չունի. իրաւ է, կային քանի մը տաքգլուխներ, անոնք ալ իրենց ոտքով Պօլիս եկեր են, յոտս վեհափառ սուլթանին իրենց աղերսը մատուցանելու..."

Այդ պատասխանը ձևակերպել կարենալու համար էր անշուշտ, որ յանկարծ մէյ մըն ալ լուր տարածուեցաւ հոս թէ երեք դաշնակցականներ եկեր են Պօլիս, երկուքը Ժընէվէն, մէկն ալ Թիֆլիզէն, բարենորոգումներու մասին կառավարութեան հետ բանակցելու համար։ Այդ միամտօրէն չարամիտ սուտն ալ որ ձըլլն ելաւ, լուր հանեցին որ Ահմէտ Ճէլալէտտին փաշան, սուլթանին լրտեսապետը, Եւրոպա պիտի խրկւի Արթին փաշային դերն ստանձնելու համար. Քռիլօվի համբաւաւոր առակին համե՞րգը կ'ուզեն վերարտադրել արդեօք. էշը կապիկին տեղ նստեցնելով հանդուրժելի՞ ընել կը կարծեն Եըլտըզին գարշաձայնութիւնը։

Բայց Ահմէտէն առաջ արդէն Լահէ մեկնած է անոր արժանաւոր որդեգիրը, տխրահռչակ Ցիրան Բէլէկեանը, հայոց և „երիտասարդ" թիւրքերու շարժումներն աչքէ չփախցնելու և պալատն իրազեկ պահելու համար։ Զմոռնանք ըսել որ „Սապահի" մասնաւոր թղթակցի պաշտօնին տակ պատսպարուած է։ Խե՞ղճ Իզմիրլեան, եթէ գիտնայիր թէ նախկին քարտուղարդ ինչ լըբբութեամբ պիտի շահագործէ քու անունդ, իր վասակային դերն սքօղելու համար։

*

Օրուան միւս կարևոր խնդիրն է Կովկաս ապաստանած հայ փախստականներուն վերադարձի առթիւ տեղի ունեցող բանակցութիւնները Եըլտըզին և ռուսական դեսպանատան միջև։

Ինչպէս յայտնի է, այդ խնդիրը շատոնց առկախ մնացած է այլևայլ նկատումներու շնորհիւ։ Սուլթանին խորհրդականները նախ վախցուցած են զինքը, ըսելով թէ այդ գաղթականները բոլորն ալ յեղափոխականներ եղած են քիչ կամ շատ, և անոնք վերստին ընդունիլը սառած օձը կրծքի վրայ տաքցնել ըսել է պարզապէս։ Երկրորդ՝ եթէ մինչև իսկ անմեղներ ըլլան այդ մարդիկ, ո՞ւր պիտի տեղաւորեն այդ բազմութիւնը. անոնց համար ալ հիմա քիւրդերուն ու Թիւրքերո՞ւն հետ պիտի թշնամանան, որոնք արդէն երեք տարիէ ի վեր առօք փառօք նստեր են հայերուն լքած անշարժ գոյքերուն վրայ։ Եւ վերջապէս ի՞նչ հարկ ապագային նոր գլխուցաւ պատրաստել. աւելի լաւ, հետզհետէ թող հեռանան քրիստոնեաները Փոքր Ասիայէն, տեղ տալով մահմէտական գաղթականներու, կուռ և միատարր բնակչութիւն մը կազմելու համար խալիֆային մահիկին տակ։

Դեսպան Զինօվիևի պնդումներուն վրայ, վերջապէս Բ. Դուռը մարտ 26-ին հաստատական պատասխան մը տուաւ. սկզբունքով ընդունեց փախստականները ետ ընդունիլ, միայն խնդրեց որ անոնց ամէնուն մէկ ցանկը ներկայացուի իրեն։ Բ. Դռան կարծիքով անոնց թիւը 10,000 չպիտի անցնէր, մինչդեռ դեսպանատունը 20,000 ընտանիք կը հաշուէր Թիւրքիայէն Կովկաս ապաստանած։

Ապրիլ 2-ին դեսպանատունը պատասխանեց թէ գոհացում տալու համար այդ պահանջին, ամէն անգամ, փախստականներու խումբ մը սահմանագլխի իշխանութիւններուն ձեռքը յանձնել տալէն առաջ, անոնց անունները պիտի հաղորդէր Դռան։ Սուլթանին գործին չեկաւ ատ. իր ուզածը բոլոր գաղթականներուն ամբողջական ցանկն էր. այդ պահանջով կը կարծէր նեղը դնել ռուսական կառավարութիւնը և անորոշ ժամանակով տոպրակը ձգել տալ այդ խնդիրը, ուստի վերստին իր նախկին պահանջը կրկնեց ապրիլ 15-ին։ Բայց ո՜րքան մեծ եղաւ սուլթանին ապշութիւնը, երբ երեք շաբաթ ետք դեսպանատունը Թէֆիք փաշային աչքին առջև դնել տուաւ երկար ցանկ մը, 25,000 անուններ, որոնց 10,000-ը այր մարդոց։ Շփոթ ու մտատանջութիւն Եըլտըզի մէջ. հիմա սկսան գլուխ կոտրել որ կերպով մը ժամանակ վաստկին։ Բայց դեսպանատունը այս անգամ կատակել չէր ուզեր. մայիս 12-ին նոր ծանուցագրով շուտափոյթ լուծում մը պահանջեց։ Այս անգամ ետ դառնալու ճամբայ չկար և սուլթանը իր ակռաները ցցուց. յաջորդ օրն իսկ պալատին առաջին քարտուղար Թահսին պէյ ռուսական առաջին թարգման Մաքսիմօվի հետ ունեցած տեսակցութեան միջոցին հաղորդեց, որ սուլթանը ուրախութեամբ 120,000 օսմանեան ոսկի կուտար իբր հատուցում այդ փախստականներուն համար, միայն թէ Ռուսիան համաձայնէր իր մօտ պահել անոնք։ Մայիս 21-ին դեսպանատունը ետ դարձուց այդ առաջարկը, առանց ո՛և է դիտողութիւն իսկ կցելու անոր։ Եըլտըզը չվհատեցաւ և հրէի սակարկութեան մտաւ, 160,000 ոսկիի բարձրացնելով իր խոստացած գումարը և միանգամայն յայտնեց թէ մտադիր է Վիէննայի նախկին դեսպան՝ Զիա փաշան արտասովոր պատուիրակ խրկելու Պետերբուրգ, խնդրելու համար ցարէն որ փախստականները վերադարձնելու պահանջէն հրաժարի։ Ատ ալ չընդունեցաւ. պատասխան տուին թէ Զինօվիև իր վերադարձին պիտի կարգադրէ այդ խնդիրը։

*

Ժամանակէ մը ի վեր Դուռը ուշադրութեամբ կը հետևի ռուսական շարժումներուն սահմանագլխին վրայ, բայց իր տրամադրելի միջոցները անբաւարար են այդ մասին։ Շատոնց է արդէն որ Բ. Դուռը՝ Երևանի մէջ օսմանեան հիւպատոսութիւն մը հաստատելու առաջարկն

ըրած է, բայց մերժումի հանդիպած է միշտ. կը խօսուի թէ այս օրերս այդ խնդիրը դարձեալ մէջտեղ պիտի հանուի։

Դռան այդ հոգածութեան մէկ հետեւանքն եղաւ հաւանօրէն՝ շաբաթ մը առաջ, մայիս 20-ին Տրապիզոն ճամբայ ելած գերմանական առաքելութիւն մը, որ կը կազմէին մայոր Մօուկլն Deutsche Bank-ին և Անատոլուի երկաթուղիներու տնօրէնները։ Խումբին ուղեգիծն է Տրապիզոն — Կարին, ուրկէ պիտի երթան սահմանագլխի ամրութիւնները քննելու, ապա պիտի անցնին Կովկաս, պիտի այցելեն Անին, և Թիֆլիզի ու Պաթումի վրայով վերադառնան հոս։ Տեղական լրագիրները ծանուցին արդէն թէ մայոր Մօուկլն Կարինի սահմանագլուխը աչքէ անցնելու կ'երթայ և վերադարձին ուղղակի Պերլին պիտի անցնի, առանց հոս ժամանակ կորսնցնելու։

Տնտեսական, քաղաքական և զինուորական երրեակ նպատակ մը ունենալ կը թուի այդ առաքելութիւնը, որ պիտի տեւէ 4-էն 6 շաբաթ։ Ուշագրաւ է այն պարագան որ այդ պարոնները փնտռած և գտած են իրենց համար թարգման մը, որ գիտնայ շատ լաւ թիւրքերէն, հայերէն, և վերջինիս ոչ միայն գրականը, այլ և բարբառները, և իմիջի այլոց, մեր արեւելեան բարբառը։

*

Քանի օրէ իվեր յուզիչ լուրեր կուգան գաւառներէն։

Վանէն ստացած մեր մասնաւոր տեղեկութիւններուն համեմատ, ընդհարումներ տեղի ունեցած են դարձեալ Աղբիւրի խմբին և թիւրք զինուորներու միջև։ Վերջիններէն 10-20 հոգի սպանուած են։ Այդ եղելութեան մանրամասնութիւնը յայտնի չէ մեզ. հաւանօրէն ատոր հետ կապ ունի վերջերս հոս տարածուած այն լուրը թէ Բաղէշի մօտ գիւղի մը մէջ հինգ թիւրք սպաննուած են հայ յեղափոխականներու ձեռքով. և այդ առթիւ քանի մը ձերբակալութիւններ եղած են թէ հայերու և թէ թիւրքերու մէջ։

Նոր լուր մըն ալ ստացանք այսօր. մասնաւոր հեռագիր մը կը հաղորդէ թէ կովկասցի հայեր խորամուխ եղած ըլլան Վանի նահանգը։ Թիւրք զօրքը իբր թէ ետ մղեր է այդ խումբը, տասը հոգի սպաննելով և տասնի չափ ալ գերի բռնելով։ Թիւրքերն ալ բաւական զոհեր տուած են։

Այդ կռիւներուն շարժառիթը յայտնի չէ տակաւին, շատ հաւանօրէն թիւրքերը դարձեալ զինակիր խումբերու հանդիպած ըլլալու են կամ պարզապէս նախայարձակ եղած են հայերուն վրայ, հայ յեղափոխականներ ձերբակալելու եռանդէն բռնուած։

Մուշի Ցրօնք գիւղի մօտ մայիս 7-ին արիւնահեղ կռիւ մը տեղի ունեցած է։ Կառավարութիւնը լսելով թէ եօթ հայ յեղափոխականներ այդ գիւղին մօտերը տեսնուած են, զինուորներու ջոկատ մը և քիւրդերու խումբ մը կը խրկէ անոնց վրայ։ Անհաւասար կռւին մէջ կ'իյնան եօթը հայ քաջերը, բայց թիւրքերն ալ զոհ կուտան — իրենց ըսելով իսկ — պաշտօնեայ մը՝ Թալիպ էֆէնտի, տասնապետ մը և չորս-հինգ զինուոր ու քիւրդ։ Այդ սուղ յաղթանակէն զայրացած քիւրդերը աւարի կուտան քանի մը գիւղեր (Ախքան, Ալճան, Ալվառինչ, Դերիկ), և կըսպաննեն բազմաթիւ գիւղացիներ։ „Օրինական" ձև տալու համար այդ սխրագործութեան, պատրւակ բռներ են թէ Ցրօնքը ապաստան տուած է Աղբիւրի խմբին, մինչդեռ այդ գիւղը անոնց երեսն ալ տեսած չէր։

Ուրիշ խժդժութիւն մըն ալ տեղի ունեցած է Սասունի Քոնաշէն գիւղը. աւերած են գիւղը, և վանահայրը Ղազար վարդապետ ու երկու վանականներ խողխողած։

Ինչ որ ալ ըլլայ, իրողութիւնն ան է, որ այդ բոլոր լուրերը մեծ յուզում պատճառեցին կառավարական շրջանակներուն մէջ և եկան ուժ տալու այն բոլոր մտատանջութիւններուն, որոնց յաջորդաբար ծնունդ տուած էին Դաշնակցութեան պատասխանը, գաղթականներուն վերադարձի խնդիրը, և Լահէի վեհաժողովին գումարումը։ Եւ կառավարութիւնը Մուշի դէպքերու ծանր հետեւանքներէն երկիւղ կրելով իր սովորական մեքենայութիւնը առաջ քշեց նորէն, այդ գործերուն ամբողջ պատասխանատուութիւնը նետելով Մուշի միւթէսարիֆին վրայ, որ շուտով Պօլիս պիտի բերուի դատուելու և պատժուելու համար (*)։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՉՈՐՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 22 մայիս

Թէև մայիս ամիսն է արդէն, բայց „դաժան" խընդիրները, սառնաշունչ՝ ինչպէս հիւսիսի ձմեռը, թոյլ չեն տալիս մեզ՝ այս դժբախտ երկրի բնակիչներիս, մի րոպէ անգամ վայելել բնութեան գեղեցկութիւնը. — „քաղաքական ձմեռը" ոչ միայն չի անցնում, այլ սպառնում է լինել մշտատև, անվերջ և անվախճան, ինչպէս „բևեռային ձմեռը"...

Շատ կը ցանկանայի մի քանի ժամով կտրել իմ նամակների թելը և հաղորդել ձեզ „քաղաքական ձմեռւայ" դաժան նորութիւնները — ուսանողական շարժումները, ֆինլանդական ինքնավարութեան թաղումը, արևմտեան մի քանի նահանգների բանւորական խլրտումները, հրեաների նոր ջարդը, աղանդաւորների դէմ սկսած նոր հալածանքը, վերջապէս ռուսահայերի հասարակական հիմնարկութիւնների դէմ ձեռք առած ամենաստոր միջոցները, — բայց երկիւղ եմ կրում, որ շատ հեռու գնամ և հայ ընթերցողների „աչքը ջուր կտրի" մինչև նորից կը դառնամ հայոց դպրոցական կալուածքների յափշտակութեան խնդրին, որի մասին խոստացայ գրել դեռ նախանցեալ նամակում։ Թոյլ տւէք ինձ ուրեմն՝ մնալ իմ համեստ շրջանակի մէջ և մեծ շեղումներ չգործել, մանաւանդ որ ամիսը մի անգամ հրատարակելով ձեր լրագիրը, դուք հնարաւորութիւն էլ չունէք հետևելու օրը օրին յաջորդող բոլոր խնդիրներին։

Եթէ սրանից յիսուն տարի յետոյ մի անկողմնապահ ռուս պատմագիր ուզենայ գրել Կովկասի կուլտուրական շարժման կամ՝ աւելի լաւ է ասել, ռուսաց բիւրօկրատիայի բռնութիւնների պատմութիւնը, հասնելով հայոց դպրոցների փակմանը իշխան Գօլիցինի ձեռքով, նա կատարելապէս ապուշ պիտի կտրի ինքն իրեն տալով այս հարցը. „ինչո՞ւ խլեցին հայոց փակւած դպրոցների կալուածքները"։ Այդ „ինչո՞ւն" անպատասխանելի

է. անպատասխանելի այն պատճառով, որ ոչ միայն իրաւական, այլ նոյնիսկ քաղաքական տեսակէտից անկարելի է որևէ բացատրութիւն տալ այդ բռնակալ կամ աւելի լաւ է ասել՝ այդ խենթ կարգադրութեան։ Այդ պատճառով ես շատ կարևոր եմ համարում պարզել այն գաղտնիքը, թէ ինչու իշխան Գոլիցին և Հոգաբարձու Եանովսկի ստեղծեցին դպրոցական կալուածների յափշտակութեան հարցը, թողնելով ապագայ ռուս սերունդին արժանաւոր անունով սկրտել իր նախահայրերի այդ „քաղաքական քայլը“։

Սկզբունքով վճռելով ոչնչացնել մօտ 500 հայ դպրոցներ, Գոլիցին, ինչպէս յայտնի է վստահելի աղբիւրներից, հարց է տալիս՝ թէ արդեօք գանձարանը կարող է դրանց փոխարէն նոյն վայրերում բաց անել կառավարչական դպրոցներ, որպէսզի ռուսացման գործը հայաբնակ տեղերում կանգ չառնի։ — Ոչ, պատասխանում է Հոգաբարձու Եանովսկին, որը բազմաթիւ փորձերից գիտէր արդէն, թէ նոյնիսկ „քաղաքական տեսակէտից“ Կովկասում որևէ դպրոց բանալու համար՝ ինչքա՜ն դժուար է եղել իրեն՝ ամենաշնչին գումար անգամ ձեռք բերել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնից։ Եւ վերջապէս որտեղից տայ խեղճ լուսաւորութեան մինիստրութիւնը, քանի որ ժողովրդից հաւաքւող հարիւրաւոր միլիոնները մտնում են բիւրոկրատիայի և զինուորականութեան անյատակ փորը, ոչինչ չթողնելով „լուսաւորութիւն“ կոչուած շռայլութեան համար։ Իր այդ նշանաւոր „ոչ“-ի հետ, Եանովսկին ներկայացնում է աւելի նշանաւոր մի բան, մի „զեկուցում“, կամ ռուսական բառով՝ մի դոկլադ...

Ի՞նչ է այդ նշանաւոր „զեկուցման“ գաղտնիքը։ — Խլել հայոց դպրոցական կալուածներն ու հարստութիւնը, որովհետև, աւելացնում է նրա տաղանդաւոր կազմողը — „հայ դպրոցները ունեն այնպիսի մեծ հարստութիւն, որ նրանով կարելի է ապահովել անհրաժեշտ ուսումնարանների գոյութիւնը և այդպիսով ընդմիշտ ազատել կառավարութիւնը դրամական մի ծանր բեռից“։ Կովկասեան կառավարչապետի դիւանի վերջին քարտուղարն անգամ լաւ գիտէր, որ այդ „զեկուցման“ շնորհիւ հրապարակ է բերւում մի ապօրինի խնդիր, անարգ յափշտակութեան մի նենգ ծրագիր, — բայց, տարաբախտաբար, յանուն „ռուսացման“, ամէն մէկը հայրենասիրութիւն համարեց լռել. ձայն չհանեցին ոչ կառավարչապետի խորհրդի անդամները, ոչ դիւանատան ղեկավարները, ոչ վերջապէս նրա շրջապատողները և խորհրդի կանչուած նահանգապետները։ Եւ այդ պատճառով Եանովսկու „զեկուցումը“ անցաւ, Պետերբուրգ ուղարկուեց, „օրինական ձևականութիւնների“ տակ դրուեց, և մի քանի ամիս չանցած յայտարարուեց՝ փակել դպրոցները և խլել կալուածքները...

Ահա այդ ժամանակ էր, որ Գոլիցին՝ մի օր իր պալատի մէջ մի հայ պաշտօնեայի ընդունած ժամանակ, իրեն յատուկ գոռոցով՝ ասել էր. „Ապա թէ հայերը համարձակւեն որևէ դիմադրութիւն ցոյց տալ, կը տեսնէք թէ ինչ կ'անեմ...“ Սպառնալիքը տաք տեղից էր դուրս գալիս, որովհետև, ինչպէս արդէն յիշատակել եմ իմ նախկին նամակում, հրամայուած էր պատրաստի զօրք ունենալ՝ հայկական դիմադրութեան ամէնաթոյլ նշանն անգամ ոչնչացնելու համար...

Դիմադրութիւն, իհարկէ, չեղաւ. հայերը անբողոք յանձնեցին թէ դպրոցները և թէ կալուածքները, խոնարհւելով մի այնպիսի ապօրինի կարգադրութեան առաջ, որի նմանը Անդրկովկասի տիրապետութեան 100 տարուայ պատմութեան մէջ ես չգիտեմ։ Հայոց համայնքը այդ նոր փաստով կրկին անգամ ցոյց տուեց, որ այժմ էլ՝ դարու վերջում՝ հայերը նոյն խաղաղ հպատակներն են, ինչ որ դարու սկզբում, երբ նոր էին մտնում ռուսաց իշխանութեան տակ։ Այդ կողմից փոփոխութիւն չկայ։ Եթէ կայ մի փոփոխութիւն, այդ ռուսաց քաղաքականութեան անմիտ փոփոխութիւնն է։ Դարու սկզբում իշխան Վորոնցովի նման մարդիկ իրենք էին աշխատում հայոց դպրոցներ բաց անել, հայերի կուլտուրական ուժերը զարգացնել, իսկ դարու վերջում իշխան Գոլիցինի նման անձինք իրենք են հայոց դպրոցներ փակում, իրենք են մարում երկրի կուլտուրական ճրագները։ Երևի, դա է բռնապետութեան ստեղծած կուլտուրան...

Տարաբախտաբար թէ բարեբախտաբար, Եանովսկու սպասած անսպառ հարստութիւնը գոյութիւն ունէր միմիայն նրա բորբոքուած երևակայութեան մէջ։ Ինչի՞ վրայ էր հիմնուած այդ համարձակ ենթադրութիւնը, գուցէ հարցնի ընթերցողը։ Նախ՝ ռուս չինովնիկների այն ընդհանուր մոլորութեան վրայ, որ իբր թէ հայոց բոլոր հիմնարկութիւնների, մանաւանդ եկեղեցիների, ուրեմն և դրանց կից դպրոցների մէջ անհամար փող կայ դիզած — հարստութիւն, որ, այդ նոյն խենթ չինովնիկների կարծիքով, հայերը թագցնում են ապագայ Մեծ-Հայաստանը վերակազմելու համար. և երկրորդ՝ այն տեղեկութեան վրայ, որ դեռ Մակար կաթողիկոսի կենդանութեան ժամանակ տրուած էր կովկասեան ուսումնական շրջանի իշխանութեան։ Ի՞նչ էր այդ տեղեկութիւնը։

Ահա թէ ինչ։ Հոգաբարձու Եանովսկին, դեռ 1886 թուին, կամենալով մի փոքր արգելք դնել հայոց դպրոցների շատացման առաջ, պաշտօնապէս յայտնում է Էջմիածնի հոգևոր իշխանութեան, որ միայն այն դպրոցները կարելի է բանալ, որոնք եկամուտի կողմից ապահովուած են։ Էջմիածնի կողմից պատասխան է տրւում, թէ հայոց բոլոր դպրոցները ապահով, հաստատ եկամուտ ունին, և ուրեմն՝ այդ կողմից նրանց բացման դէմ արգելք դնել չի կարելի...

Ահա, ուրեմն՝ մի կողմից այն ընդհանուր ենթադրութիւնները, թէ հայոց եկեղեցական հիմնարկութիւնների մէջ անբաւ ոսկի է դիզած, իսկ միւս կողմից Էջմիածնի տուած տեղեկութիւնը՝ Եանովսկու և նրա մտերիմների մէջ այն վերջնական կարծիքն էր ամրացրել, թէ հայոց դպրոցները փոքր ամբարներ են... Այդ ամբարներն էր ահա, որ Գոլիցին և Հոգաբարձու Եանովսկին վճռեցին յափշտակել...

Յափշտակեցին... Բայց ի՞նչ դուրս եկաւ միջից, — գրօշներ, եթէ չհաշուենք մի 10-15 դպրոցներ, որոնք յատուկ կտակներով ապահով կալուածքներ և եկամուտ ունին։ Ես հաստատ գիտեմ, որ Թիֆլիզի շրջանի կառավարչական դպրոցների վերատեսուչներից մէկը, Եանովսկու աջ ձեռքը, դպրոցների գոյքը ստանալիս, կատաղած բացականչում էր ամէն տեղ. „Սա աննրելի դաւադրութիւն է. մենք տեղեկութիւն ունէինք, որ Թիֆլիզի Գայիանեան դպրոցը 250 հազար ռուբլի հնչուն

փող ունի, իսկ մեզ տալիս են միայն 25 հազար ռուբլի. Յովհաննեան դպրոցը, որ միլիոնատէր էր, բացի մի քարվանսարայից՝ ոչինչ չի ցոյց տալիս։ Նոյնը և միւս դպրոցները։ Այո՛, հայերը թագցրին, լաւ թագցրին դպրոցների հարստութիւնը...»

Հայոց դպրոցների մասին անթիւ զեկուցումներ գրողները, ի մեծ դժբախտութիւն իրենց, մի շատ կարևոր բան մոռացել էին — այն, որ հայոց դպրոցների մեծ մասը, պահւում էր տարիների ընթացքում ոչ թէ հաստատ, պատրաստ եկամուտներով, այլ ծխականների, համայնքների պատահական նուէրներով։ Հայոց դպրոցները ամսի 20-ին գանձարան չէին գնում փող ստանալու համար. հայ համայնքն էր, որ լրացնում էր ծախքի մեծ մասը երբեմն նուէրներով, երբեմն ներկայացումներով, երբեմն էլ նոյնիսկ պարտք վերցնելով։ Ճիշդ է, հայոց դպրոցները ապահով էին, բայց ապահով ժողովրդի կենդանի աջակցութեամբ, տարէցտարի կրկնւող նպաստներով, բայց ոչ թէ գանձարանում դրած պատրաստ փողերով։ Կոյր և բութ պէտք էր լինել չիմանալու համար, որ խեղճ հայոց ուսուցիչները՝ իրենց հանգստութիւնը բոլորովին մոռացած՝ «աւետիս» էին ման գալիս, թատրոնական ներկայացումներ էին կազմում, հազար ու մի դուռ էին բաղխում իրենց ռոճիկը դրստելու համար։ Այդ շատ լաւ գիտէ ամէն մի գիւղացի. չգիտէ միայն Եանովսկին, որ «դոկլադներ» գրելու համար փաստերը քաղում է ոչ թէ կեանքից, այլ իր հայակեր երևակայութեան մութ խորքերից...

Ընդունենք մի վայրկեան, մի րոպէ, որ ռուսաց կառավարութիւնը, դրդւած քաղաքական որևէ տեսակէտից, կուրացած ռուսացման տենչով կամ վախեցած այն դատարկ և շինծու լուրերից, թէ հայ դպրոցների մէջ հակակառավարչական պրոպագանդա է լինում, իրաւունք ունէր — իր տեսակէտից, իհարկէ — դպրոցները փակելու։ Ընդունենք, ասում եմ, մի վայրկեան այդ տեսակէտը։ — Լաւ։ Բայց միթէ՞ քաղաքական կամ կառավարչական որևէ տեսակէտով այդ դպրոցների փակումը իրաւունք էր տալիս գրաւել, խլել, յափշտակել նրա սեփականութիւնը։

Թէ Գոլիցին, թէ Եանովսկի և թէ ներքին գործերի մինիստր Գորեմիկին, որ հաւանութիւն տւեց նրանց քայլերին, քաջ գիտեն, որ հայոց դպրոցների կալւածքները կամ եկեղեցու սեփականութիւն են և կամ յատուկ կտակներով ամրապնդած գոյք։ Օրինակ, Թիֆլիզի, Ալեքսանդրոպոլի, Ախալցխայի, Բագւի և ուրիշ տեղերի շատ դպրոցներ ունին մեծ կալւածքներ, որ ստացել են յատուկ կտակներով. և այդ կտակ անողները իրենց հարստութիւնը նւիրել են հայոց եկեղեցական դպրոցին և ոչ թէ առհասարակ որևէ դպրոցի, նրանց գործադրութիւնը յանձնել հայոց հոգևոր իշխանութեան իրաւասութեան և ոչ թէ առհասարակ որևէ մարմնաւոր իշխանութեան։ Հայոց 500 դպրոցից աւելի քան 300-ը յատուկ նուէրներ ունեն, սրբագործւած օրինական կտակներով, որոշ ցուցմունքներով, որոնք, օրէնքի տեսակէտից՝ ոչոքի և երբեք իրաւունք չեն տալիս վաւերելու այդ նուէրների և կտակների հետ այնպէս, ինչպէս նրանց քէֆն է տալիս։ Եւ այդ բազմաթիւ կտակ անողները իրենց վերջին կամքը յայտնելիս՝ այն խորին համոզման մէջ են եղել, թէ իրենց ցանկութիւնը միշտ կը գտնւի օրէնքի խիստ և անշեղ պաշտպանութեան տակ, առանց երևակայելու, որ մի օր, դրդւած ինչ որ քաղաքական տեսակէտներից՝ օրէնքը և դրա հետ միասին բազմաթիւ կտակները ոտի տակ կը գցեն նոյնիսկ այն մարդիկ, որոնք եկել են Կովկաս՝ իբր թէ այդ օրէնքը անխախտ գործադրելու համար...

Դպրոցների փակումից յետոյ Կովկասի շատ տեղերում, թէ մասնաւոր լիազօրներ, թէ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներ, թէ վերջապէս ծխականներ բազմաթիւ գօկումենտներ և վաւերագրեր ներկայացրին կառավարութեանը՝ ապացուցանելու համար, որ այն կալւածքները, որ խլւում են, եկեղեցուն են պատկանում, կամ այն փողերը, որ յափշտակւում են, դրանք յատուկ կտակներով նախորոշած գումարներ են, անձեռնմխելի։ Շատ տեղ դպրոցների բարերարները, որոնք դեռ կենդանի են, յայտարարեցին, որ իրենք իրենց նւիրած փողը կամ տունը այժմ, երբ եկեղեցական դպրոցները փակւում են, իրենք ուզում են նւիրել եկեղեցուն կամ իրենց ժառանգներին։ Բայց բոլորը անօգուտ։ Բոլորին միայն մի պատասխան էր տրւում. «Մենք այս բոլորը կը վերցնենք, իսկ դուք, եթէ գանգատ ունեք, գնացէք և գանգատւեցէք. դիմադրողները կը պատժւեն ամենախիստ կերպով»։

Այսպէս էլ արեցին։ Գոլիցինի կողմից տրւած ամենախիստ հրամանի համաձայն, այն բոլոր փողերը, շինութիւնները և գոյքը, որ որևէ «ինսպեկտոր» (տեսուչ) կամ «նաչալնիկ» (գլաւառապետ) համարում էին դպրոցական, խլեցին. մի մասը կնքեցին, միւս մասը պահ կամ վարձով տւեցին, փողերը իրենց անունով գանձարան մտցրին, ասելով՝ «գնացէք և գանգատւեցէք, օրէնքը արտօնում է»։ Բայց այդ խօսքերից անմիջապէս յետոյ հասկացնում էին իրենց յատուկ ձևերով, որ գանգատւողը կը նկատւի իբրև անվստահելի մարդ, իբրև մտքեր պղտորող և հակակառավարչական... Ահա այն պատճառը, որ չնայած ձևական կողմից իրաւունք է տւած գանգատւելու, չնայած նաև, որ դատարանական շրջաններում այն կարծիքը կայ, որ մասնաւոր իշխանութեան կարգադրութիւնը ապօրինի է, բայց և այնպէս մինչև այժմ, ինչքան ինձ յայտնի է, բացի, գուցէ, մի-երկու դէպքից, գանգատ ներկայացնողներ չեղան, որովհետև վախենում են... Իսկ գիտէ՞ք ինչ կը նշանակի Կովկասում՝ վախենալ...

Այդպէս ուրեմն՝ յանուն «պետական շահերի», կամ, աւելի ճիշդ՝ յանուն «ռուսացման», 20-րդ դարու շեմքում, Կովկասում կատարւեց մի հրապարակական յափշտակութիւն, մի բացարձակ գողութիւն, որի հեղինակները իշխանութեան բարձր ներկայացուցիչներն են և որոնք՝ փոխանակ մեղադրւողների նստարանի վրայ նստելու, համարւում են պետական խոշոր մարդիկ, հայրենասէրներ, ռուսաց անւան արժանաւոր պաշտպաններ։ Մի ուրիշ ժամանակ, մի ուրիշ երկրում Գոլիցին, Եանովսկի, Միցկեվիչ, Կիրէեվ դատարան կը քաշւէին, իբր օրէնքի խախտողներ, իբր յափշտակողներ, բայց Պօբեդոնոսցեվեան ըէժիմի օրով՝ այժմեան Ռուսաստանում նրանք դեռ շքանշաններ և արտօնութիւններ են ստանում...

Բնորոշ մի փաստ։ Ինձ հաղորդեցին, որ մի հայ պարոն, շատ համակրող ռուսներին առհասարակ, մինչև սրտի

խորքը վրդովված դպրոցական կալուածքների յափշտակութեամբ, ուղղել է Կիրիլ Պետրովիչ Եանովսկուն մի նամակ, յայտնելով, որ նրա այդ քայլը մի անջնջելի արատ է ռուս անուան և անարգանքի յաւիտենական արձան՝ Ռուսաստանի համար, որին Հայերը այնքա՞ն համակրանքով յարեցին դեռ մի դար առաջ: Նամակի հեղինակը անուանել է Եանովսկուն դահիճ կրթական գործի, իսկ նրա վարմունքը՝ հրապարակական գողութիւն: Նամակը անստորագիր չէր, այլ կրում էր հեղինակի ամբողջ անունը, ազգանունը և հասցէն: Սակայն Եանովսկին, ինչքան լսել եմ, ոչ մի միջոցի չդիմեց այդ ծանր վիրաւորանքի և յանդուգն հայի դէմ. կարդաց, մռնչաց, բայց կուլ տուեց... Եւ երևի, իբրև վրէժ, միւս օրը ձեռնարկեց մի նոր „դօկլադի"... օրինակ, հայոց սեմինարիաների դէմ...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՂՈՎԸ

Լահէի վեհաժողովին ուշադրութիւնը հրաւիրելու համար հայկական խնդրին վրայ, միթինգներ տեղի ունեցած են Բուլղարիայէն և Ամերիկայէն զատ նաև Ալեքսանդրիոյ և Կահիրէի մէջ մայիս 21-ին կիրակի օրը:

Ալեքսանդրիոյ միթինգը հետևեալ հեռագիրն ուղղած է խորհրդաժողովի նախագահին, վեց մեծ պետութիւններու արտաքին գործոց նախարարներուն և Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահին:

Խաղաղութեան խորհրդաժողովի նախագահին, Լահէ

„Ալեքսանդրիոյ հայ գաղութը արտասովոր միթինգ գումարելով, խորհրդաժողովին միջամտութիւնը կը թախանձէ ապահովելու համար խաղաղութիւնը Հայաստանի մէջ եւրոպական պետութիւններու քննթրոլին տակ"։

Միթինգը որոշեր է նաև իբր պատուիրակ Լահէ խրկել պր. Միհրան Գալֆայեան, Ալեքսանդրիա հաստատուած պոլսեցի վաճառական մը:

Կահիրէի միթինգը որոշեր է հեռագրել Լահէի խորհրդաժողովի նախագահին հետևեալը:

Խաղաղութեան խորհրդաժողովի նախագահին, Լահէ

„Կահիրէի հայերը մեծ միթինգ մը գումարելով կը թախանձեն Խաղաղութեան վեհաժողովին զօրավիգը Հայաստանի մէջ իրական բարենորոգումներ ապահովելու եւրոպական տէրութիւններու քննթրոլին տակ"։

Որոշեր է նաև իբր պատուիրակ ընտրել պր. Մինաս Զերազը, Խորհրդաժողովին քով Կահիրէի հայոց կողմէն պաշտպանելու համար հայկական խնդիրը, միթինգի որոշումին համաձայն:

*

Խաղաղութեան վեհաժողովի առիթով Ամերիկայում ապրիլ ամսայ ընթացքում, ինչպէս մեզ հաղորդում են, կազմուել են երկու հանրագրեր — մէկը նշանաւոր ամերիկացիների կողմից, միւսը այնտեղի հայերի կողմից: Երկու հանրագրերն էլ ժամանակին ուղարկուել են Միացեալ Նահանգների նախագահ Մակ-Կինլէին, որը հեռագրել է խնդրամատոյցներին, թէ հանրագրերը յանձնեց արտաքին գործոց նախարարին, իսկ վերջինս իր կողմից՝ նոյնպէս հեռագրով՝ պատասխանել է, թէ „այդ կարգի խնդիրներ նկատի չեն առնուելու ժողովի կողմից"։ Գոհ չլինելով այս պատասխաններից՝ հայերը ուղարկել են մի պատգամաւորութիւն պ. Սէթ-Լօի մօտ, որ Լահէ գնացող ամերիկեան պատուիրակներից մէկն է: Պ. Սէթ-Լօն ևս յոյս չէ յայտնել, որ հայկական խնդիրը կարող է ժողովի զբաղմունքի առարկայ դառնալ, բայց խոստացել է ոչ մի ջանք չխնայել հայերի օգտին, եթէ ներկայանայ որևէ առիթ:

*

Լոնդոնէն մայիս 22 թուակիր հեռագիր մը կը հաղորդէ թէ Անգլեհայկական Միութիւնը Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան միջոցով Լահէի խորհրդաժողովի բրիտանական պատուիրակներուն ուղղած է առաջադրութիւն մը, խնդրելով վեհաժողովին մէջ պաշտպանել հայկական բարենորոգումներու հարցը խաղաղութեան և մարդկութեան շահուն համար:

Նման առաջարկ մը ուղղած է Միութիւնը նաև ամերիկեան պատուիրակներուն, Լոնդոնի ամերիկեան դեսպանին՝ պ. Շօթի միջոցով: Մեզ կը հաղորդեն նաև թէ մայիս 18-ին նոյն Միութիւնը հեռագրած է Միացեալ-Նահանգներու նախագահ պ. Մակ-Կինլէին, խնդրելով ամերիկեան կառավարութեան աջակցութիւնը հայկական խնդիրը Լահէի խորհրդաժողովին մէջ լուծելու համար:

*

Լահէի ժողովին դիմումներ տեղի ունեցան առանձին յայտագրերով նաև „Երիտասարդ Թիւրքերի" մի խմբից ու „Ազատամիտ օսմանցիների" մի կոմիտէից: Առաջինները պահանջում են խաղաղութեան ժողովից սահմանադրութիւն հաստատել Թիւրքիայում, երկրորդը՝ ազատել „դարիս ամենամեծ մարտիրոս" Մուրատ V-ին 20 տարուայ բանտարկութիւնից և հռչակել նրան կայսր սուլթան Համիդի տեղ:

* * *

Մայիս ամսում տեղի ունեցաւ Լահէի խորհրդաժողովի բացումը: Մինչև այսօր ուշի ուշով հետևելով նրա ընթացքին՝ հարկաւոր ենք համարում առայժմ միայն արձանագրել հետևեալ փաստերը:

Ինչպէս յայտնի է, պ. Մինաս Զերազը Բուլղարիայի հայերի կողմից Լահէ գնաց, բայց նրան այնտեղ յայտնեցին, որ հայկական խնդիրը ժողովի ծրագրից դուրս է: — Այնուհետև թէև իր նիստերից մէկում ժողովը հաստատեց մի „առանձին մասնախումբ", որ պիտի ընդունէր ամէն տեսակ „կողմնակի դիմումներ, առաջարկութիւններ, խնդրագրեր և այլն", բայց յետոյ պարզուեց, որ այդ „կողմնակի դիմումները" ևս նիւթ՝ պիտի ունենան անմիջապէս ժողովի ծրագրի հետ կապ ունեցող խնդիրներ միայն: — Ուշադրութեան արժանի է նոյնպէս և հետևեալ դէպքը, որ պատահել է Լահէում պ. Զերազին. „Երիտասարդ քրիստոնեաների" միութիւնը հրաւիրում է պ. Զերազին մի դասախօսութիւն կարդալու Հայաստանի և հայերի մասին: Տեղական ոստիկանութիւնը, իմանալով այդ մասին, արգե-

լում է պ. Չերազի դասախօսութիւնը, պատճառ բռնելով, թէ նա իր խօսելիքը պիտի լուսաբանէր մոգական պատկերներով և հետևաբար պիտի տար մի տեսակ „ներկայացում“, որի համար իբր թէ հարկաւոր է նախօրօք թոյլտուութիւն ստանալ։ Այն ժամանակ միջամտում են տեղական լրագրեր ու պարլամէնտական գործիչներ, որոնք բողոքելով կառավարութեան հակասահմանադրական կարգադրութեան դէմ, իմիջի այլոց պարզում են, որ հայերի մասին դասախօսութեան արգելումը տեղի է ունեցել շնորհիւ հօլլանդական արտաքին գործոց նախարար և վեհաժողովի անդամ պ. Բօֆօրին, որ շատ մօտ է Թուրխան փաշային և որ վերջին օրերս „օսմանիէ“ շքանշանը ստացաւ սուլթանից։ — Միաժամանակ Լահէի թատերաբեմից Տաճկաստանի ներկայացուցիչ Թուրխան փաշան հեռագրեր է ուղարկում սուլթանին, հաղորդելով, որ „իրենց գործերը լաւ են գնում“...

ԹՈՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Եւ Ալլահը „ոչնչէն“ ստեղծեց Օրմանեանը ու անոր մէջ փչեց շունչը դ ա ւ ա ճ ա ն ո ւ թ ե ա ն.

Պատրիարքներու աւանդական „փշոտ“ գահը բարձրացած օրը շատեր, որոնք կեանքի մէջ ամէն քար գլորցուցած են, այդ մսաքլուրին արտաքին զոռոզ ու հում ձեւերուն մէջ կը նախատեսէին որ անոր ագիէն մաղ չ'ելլեր: Երկու չարիքներու փոքրագունի ճակատագրական սկզբունքն էր որ ազգին գլուխը փաթթեց այդ աստուածաբանական որդերէ կրծուած խուտիլակը:

Արմաշի վերատեսուչը սակայն իր մասնաւոր զէնքերն ունէր հասարակութեան վրայ ազդելու համար: Տիկ մարմին, թեւերու ու ծիւերու խօլ ու օդային շարժումներ, ահեղամռունչ ձայն, որոնց մէջ աշխուժ եւ կա․ծերկրակ մարդու մը նկարագիրն ու տոկունութիւնը կը փորձէին նշմարել շատ միամիտներ:

Արտասահմանի մէջ քիչուոր չէին անոնք, — մարդեր որոնք ամէն բանի վերջը կըսպասեն թեր ու դէմ իրենց վեհավճիռը արձկելու համար, ու մինչեւ իսկ կ'ամբաստանէին թէ իրենց հոգին արդէն վկայած կամ նախատեսած էր գալիք աղէտը — որոնք Օրմանեանի դէմ եղած յարձակումները անիրաւ կը գտնէին: Օրմանեան խորամանկ մարդ է կ'ըսէին, սուլթանի դէմ ատանկ մարդ պէտք է. քծնող, սողոսկուն կամ այն „մեղրոտ լեզուն“ որով Շէյքսփիր յիմար հարստութիւնները լզել կուտայ: Թիւրքիոյ քաղաքականութիւնը հիմա ատ կը վերցնէ: Իզմիրլեանը գետնէ գետին կը ծեծքէին, իր յամառութեանը համար, որովհետեւ անոր կռնկին ոսկորը չէր ծռեր: Այդպէս ներշնչուած էին այդ առաքեալները: Վերջապէս Օրմանեան մարդոց լաւերուն մէջ լաւագոյնն էր, որ պիտի դարմանէր եղած աւերը, պիտի աւլէր Իզմիրլեանի մոխիր-յիշատակը, պիտի զգաստացնէր — Չարխափանի ուժով — համիդին խելագարութիւնը ու անանկ մը պիտի ընէր որ ազգը այն պատրանքը ունենար թէ եղած աշխարհաւերութիւնը դար մը առաջ տեղի ունեցած էր: Վ ե ր ջ ա լ ո ւ ս ի ձ ա յ ն ե ր ո ւ պէս նուաղուն, տրտմանուշ ու... հոգեվարք բան մը ունէին այդ մեծամոլիկ զանգատները:

Հը՛մ, Օրմանեանի ծիզվիթ ու անուշ լեզուն, ստեղի պէս սողացող հոգին չպսակեցին ինչ որ կ'ակնկալէր: Ճըլխ ելաւ:

Փօլսէն մեր թղթակիցը սապէս կը նկարագրէ Օրմանեանը. „Պատրիարքը ամէն սրբութիւն ոտնակոխ ընել սկսած է. պալատը տրուած ս ի ւ ն ն է թ ի հացկերոյթ մը նախադաս կը համարի ամէն ազգային արժանապատուութենէ... Օրմանեան հակառակ իր շնական հաւատարմութեան ամէն տեղ կորսնցուցած է իր հեղինակութիւնը զօրանոցներուն առջեւէն անցած ատենը քարեւի կեցող զինուորները ետեւնին կը դարձնեն... Սահմանադրութեան տարեդարձը այս տարի նորէն մոռուեցաւ եւ առաւ „պատրիարքական օրէնք“ անունը. այդ օրէնքին օգտակարութիւնը կրօնական ժողովի պերճախօս ատենապետը բացատրեց... փրկչի խենդերուն ու ապուշներուն եւ յետոյ բարեմաղթութիւններ ըրաւ վեհ. սուլթանի համար“, որ... սահմանադրութիւնը կլլեց ու „պատրիարքարանի օրէնքը“ ցկնեց:

Օրմանեան ս ի ւ ն ն է թ ի հանդէսը պատւելու պարտաւոր էր, քանի որ Քրիստոս ալ թլփատուած էր. մանաւանդ որ սիւննէթի փ ի լ ա ւ ը բացառիկ առիթ մըն է իր բացառիկ համովը: Կը յուսանք որ երբ Օրմանեանի թլփատումը կատարւի, զինուորները ա՛լ երեսդարձութիւն չպիտի ընեն եւ իրենց ս է լ ա մ ներով պիտի վերահաստատեն գ ա ր ա պ ա շ պատրիարքին հեղինակութիւնը: Մանաւանդ երբ առաջիկայ տարի տեղական յաւիտենափոխութեան համաձայն „պատրիարքարանի օրէնքը“ նորէն այլակերպւելով, „Ըլտըզի օրէնք“ մեծափառ անունը հագնի:

Մինչեւ վերջը եղաւ ներքինիի պէս հլու, երբեք իր հածոյակ քաղաքականութեան ամպերէն դուրս չելաւ, եւ օրիկ մը, Մաղաքը չյիշեց թէ սիրտ մը ունի. այսպէս իր „հոգուն տունը“, ինչպէս կ'ըսէ ժողովուրդը, ամայաւեր մնաց, ուր կը գտնենք միայն փոշի եւ մամուկքուն:

Ինք զո՞հ մըն է թէ յաւակնոտ փառասէր մը. առայժմ մթնշաղ է մեզի համար: Բայց իրերու տրամաբանական ընթացքէն դատելով, նկատելի է որ Օրմանեան երկերես քաղաքականութիւն մը կը բանեցնէ. մէկով ազգը թմրեցնելու ու սըլեցնելու, միւսով Ըլտըզին դիւր գալու համար: Իր բոլոր երեսպաշտութիւնները, երկրպագութիւնները սակայն չեն զօրեր սուլթանի հայաջինջ քաղաքականութենէ նշանախեց մը անգամ փոխելու: Սահմանադրական պատրիարք մը որ ճի՛ կ'ընէ ազգին երեսին, ու մի՛ւս կողմէն՝ անոր իրաւունքներուն դէմ գողնուգող կը դաւադրէ:

Խաղաղութեան կամ խաղքութեան համաժողովին առթիւ արտասահմանի փախստական հայերն ու հայ գաղթականութիւնները, ընդհանուր ոգեւորութիւնով, պ. Չերազը իբր պատգամաւոր Լահէ խրկած են հայ ազգին ցաւերն ու արդար պահանջները միջազգային համաժողովի սեղանին վրայ դնելու համար: Իրաւ է որ այդ չարաբաստիկ ժողովը առջի օրէն ծանծղած էր թէ ոչ մէկ հպատակ կամ հարստահարուած ազգերու բողոքներուն ուշադրութիւն պիտի ընծայւի: Լահէի ա ն տ ա ռ ի պ ա լ ա տ ի ն մ է ջ իրենց նեղէզ սրինգներուն վրայ, ցարին նշանակած տաղերը միայն պիտի հովերգէին ու այդ խորհրդաւոր անտառին սիրոյ հովանիներուն տակ, ուր սոխակները չեն լար, ուր ծառերու սըքիւնը ողբ չի պարունակեր... ցարին աստուածացումը պիտի փառաբանէին միայն:

Պ. Չերազի պատգամաւորութիւնը կ'երեւի Ըլտըզի մէջ մեծ յուզում պատճառած էր: Համիդը տխրեցաւ — ոչ այն մարդկային տխրութիւնը, որ սրտի մը գոյութիւնը կը հաստատէ — որ հայերը իր երախտիքներուն փոխարէն դեռ ապերախտօրէն կը վարուին, աշխարհի առջեւ զինքը կը հալածեն բոցեղէն սուրը ափերնին. տխրեցաւ... ու այդ տխրութիւնը զէշ ազդեց Օրմանեանի սրտին վրայ: Օրմանեան, աւելորդ է ըսել, խիստ զգայուն մարդ — թէեւ չէ երգած սէրն ու սոխակը... կը կսկծայ իր վեհապետը, որ օրուգիշեր իր հ ա ւ ա տ ա ր ի մ հայ հպատակներուն բարօրութեան վրայ մտածելէ հալումաշ կ'ըլլայ: Պէտք չէ ցաւցնել այդ մարդուն սիրտը, որ մօրը փորէն ինկած օրէն հայ ազգին մեծամեծ բարիքներ ընել կը խոստանայ: Այդ արդարասէր փադիշահը, երբ խպիրով գերեզման իջեցնեն, լեզուն բացուելով պիտի մրմնջէ „ա՜խ, հաւատարիմ հայ հպատակներս...“ Օրմանեանը ողջ մնար ու լսէր, որովհետեւ այն օրը խուլերն ու մեռելներն ալ պիտի լսեն:

Ցաւ չերկնցնենք, սուլթան Համիդ, հայոց դիմումները դերեւ հանելու համար ըրած ջանքերուն անօգուտութիւնը տեսնելով, ի՛վ գիտէ ինչ ներշնչումով, պատրիարքը կը հրաւիրէ որպէսզի խաղաղութեան ժողովին հայերուն կողմէ եղած դիմումը օդը հանէ: Պատրիարքը իսկոյն թեւերը կը սօթտէ եւ կը հեռագրէ Լահէի վեհաժողովի նախագահին թէ՛ „հայոց պատրիարքարանը Չերազի պատգամաւորութենէն լուր չունի. . թէ՛ հայոց պատրիարքը, իբրեւ հայ հասարակութեան քաղաքական պետ, կարելի չէր որ չգիտնար ատանկ բան մը, մանաւանդ որ Թիւրքիոյ բոլոր հայերը վեհափառ սուլթանին հաւատարիմ հպատակներն են, որոնք օսմանեան կառավարութեան դէմ եղած ո՛եւէ թշնամական ցոյց ատելի կը գտնեն“: Գերապայծառ Օրմանեանի այս հեռագիրը մարդ չ'իմանար, գիշերւան պէս լուռ կը մնայ:

Նախապէս ըսենք, որ Լահէի վեհաժողովին դիմումը օսմանեան կառավարութեան համար զոհէ ժամանակաւոր ապահովութեան կափարիչ մըն էր. Օրմանեան այդ կափարիչին վրայ իր բոլոր ծանրութիւնովը նստելու տխմարութիւնը ունեցաւ:

Օրմանեան աններելի լրբութիւնը եւ ոճիրը գործեց, ամբողջ ազգին միահամուռ ոգեւորութեան դէմ այդ սրբապիղծ հեռագիրը քաշելով: Օրմանեանը եւ իր մենտօրը, Արթին փաշան, պէտք էին նախ գլուխգլխի տալ ու մտմտալ, որ շքանշաններու ցոլքին տակ երբեք չեն կրնար պարտկել ճչող դաւաճանութիւնը, եւ ազգին գերեզմանը փորելէն առաջ՝ իրենց գերեզմանը կը փորեն եւ շա՜տ շա՜տ խորունկ... Անհրաժե՞շտ էր որ ազգային սայլը

այդ տխուր „լուծք"-ին լծւէր: Օրմանեան Վատիկանի շանթերէն կարողացաւ պրծիլ, բայց հայ ազգի կայծակներէն ապահովւելէ չի կրնար խոյս տալ: Մինչեւ հիմա եղած տրտունջները, խրատները վրայ եկան անոր ականջին, Եզրումի պէս պատրիարքներու հնամաշ գահին վրայ իր խոշոր մարմնին հանգստութիւնը չաւրեց. ու հոգին խորղեցաւ սատանութիւն մտմտալով միայն:

Երբ Արթին փաշան Թերեւս կը խմբագրէր այդ անմոռանալի հեռագիրը ու պատրիարքը կըստորագրէր, սուլթանը իբր վարձատրութիւն այդ հաւատարիմ երկուրեակներուն, Մուշի մէջ, առանց պատճառի, կոտորած մը առաջ կը բերէր ուր շատ մը գեղեր ու վանքեր ամբողջ աւերակ եղած եւ հարիւրաւոր մարդեր ալ կոտորւած են: Այսպէս կը վարձատրեն Թիւրքիոյ մէջ:

Հեռագիրը տուն տալէն վերջն է որ Արթին փաշան սուլթանին հանդէպ, իր պարտականութիւնը կատարած մարդու մը բարեխղճութիւնով, հրաժարական կուտայ քաղաքական ժողովի անպտուղ նախագահութենէն, տարաձայնելով թէ իրեն եղած խոստումները չեն կատարւիր: Այս վերջինով ալ իր „սիրելի" ազգին հանդէպ ճերմակերես մնալու համար, դիւանագիտական էնտրիգները կեղծ արտցաւութիւնով մը ուսկեզօծելով:

Կ'ընդունինք որ պատրիարք մը ապիկար կրնայ ըլլալ, որուն միակ դարմանն է հողաթափները հագնիլ ու չորսոտնէն հեռանալ:

Խօսքը մէջերնիս, Ազարեանը խելօքիկ մը աւանդեց հոգին, դո՛ւն որու կըսպասես Օրմանեան, ինչո՞ւ չես մեռնիր...

Ի՞նչ ցաւալի բան է, կամ մարդ մը գէշ կնիկ մը ունենցեր կամ ազգ մը անպիտան պատրիարք մը:

ԹԻՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ

(Շարունակութիւն նախորդ թիւէն եւ վերջ)

Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը հաւատ չընծայելով Թիւրք կառավարութեան կողմէն բխող այդ կարգի ո՛եւէ դիմումի մը անկեղծութեանը, մերժեց անոր հետ բանակցութեան մտնելու առաջարկը: Սակայն առաջն առնելու համար այն ամէն առարկութիւններուն՝ որոնց Թերեւս կրնար ապագային տեղի տալ իր անպայման մերժումը սուլթանին ըրած այդ առաջարկին, որոշեց նաեւ յայտնել Թիւրք կառավարութեան պատւիրակին, թէ միակ զիջումը որ կրնար ընել Ընդհանուր Ժողովը — առանց, այդ առթիւ ո՛եւէ յանձնառութեան ներքեւ մտնելու — այն էր, որ Դաշնակցութեան և Թիւրք կառավարութեան միջեւ պաշտօնական բանակցութիւններու սկզբնաւորումը հնարաւոր դարձնելու համար, եռամսեայ պայմանաժամ մը կուտար Թիւրք կառավարութեան, առաջարկելով այդ երեք ամսւան մէջ իրագործել հետեւեալ երեք կէտերը. իբր գրաւական մը Դաշնակցութեան մօտ ըրած իր դիմումներուն անկեղծութեանը:

ա. — Թիւրքիայէն ելած բոլոր հայ գաղթականներուն արտօնութիւն եւ ապահովութիւն տրւի ետ դառնալու իրենց հայրենիքը:

բ. — Ջարդերու ու գաղթականութեան միջոցին Թիւրքերու եւ Քիւրդերու կողմէն իւրացւած հայոց անշարժ կայքերը վերադարձւին իրենց օրինական տէրերուն:

գ. — Քաղաքական յանցանքով բանտարկւած բոլոր հայերն ազատ արձակւին:

Ընդհանուր Ժողովին նիստերը փակւելէն ետք և այս վճիռը ուր որ անկ է հաղորդւելէն առաջ, — այսինքն այն միջոցին իսկ, երբ Թիւրք կառավարութեան պատւիրակը կըսպասէր Ժընէվ Դաշնակցութեան պատասխանին (և երբ կը շարունակէին տեղալ „բարենորոգումներու" մօտալուտ հաւաստիքները, — տեղի ունեցան Խլաթի սարսափները. ուստի Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինը հարկ դատեց չորրորդ պայման մըն ալ աւելցնել նախորդ երեքին, որ է.

դ. — Օրէնքի բոլոր խստութիւնով պատժւին Խլաթի ու Բաղէշի սարսափներուն հեղինակները եւ վնասւող բոլոր գիւղերը հատուցում ստանան:

Այն պարագային երբ վերև յիշատակւած չորս խնդիրները գոհացուցիչ լուծում մը չստանային Ընդհանուր Ժողովին վճիռը Ցարութիւն փաշա Տատեանին յանձնելու օրէն մինչև երեք ամսւան միջոցին մէջ, Դաշնակցութիւնը խզած պիտի նկատէր ամէն յարաբերութիւն իր և Թիւրք կառավարութեան պատւիրակներուն միջև:

Ընդհանուր Ժողովին որոշմնագրին պատճէնը — վաւերացւած Արևմտեան Բիւրոյի կողմէն 1898 Հոկտեմբեր 25-ին — Տրդատ պէյին հաղորդւեցաւ նոյն տարւան Նոյեմբեր 2-ին:

Ինչպէս դժւար չէր արդէն գուշակել՝ այդ որոշմնագիրը գոհացում չտւաւ պալատին: Եւ Ցարութիւն փաշային առաջարկւեցաւ իր բոլոր ջանքը Թափել Խմբագրութիւնը համոզելու, որ ետ առնէ այդ որոշմնագիրը և անոր փոխարէն խմբագրէ կարճ գրութիւն մը, ուր վստահութիւն յայտնելով սուլթանին „բարեացակամութեան" վրայ, „փափագի" ձևով և իբրև Դաշնակցութեան բոլոր ուզածը ներկայացնէ այն չորս կէտերը, որոնք բանակցութիւններ սկսելու համար իբրև նախնական պայմաններ միայն դրւած էին Ընդհանուր Ժողովին կողմէն: Ճիշդ այդ միջոցին էր Խմբագրութիւնն ստացաւ Ցարութիւն փաշայէն նոր նամակ մը, որուն կարևոր մասերը կը դնենք մեր ընթերցողներու աչքին առջև:

Կ. Պոլիս $^{14}/_{26}$ Նոյեմբեր 1898

Առ Պատուարժան Խմբագրութիւն Դրօշակի

'ի Ժընէվ

Մեծարգոյ Տեարք,

Իմ նպատակս էր ազգը հանդարտեցնել եւ հաշտեցնել Օսմանեան կառավարութեան հետ, եւ արդարեւ այս պաշտօնն էր որ մասնաւոր կերպով ընդունեցայ Վեհ. Սուլթանին հրամանաւ երեք տարի է 'ի վեր:

Ինչպէս գիտէք կատարեալ խղճի հանդարտութեամբ ջանացի ձեռքէս եկածն ընել, եւ արդէն ձեռք բերած արդիւնքներս ժամանակին հետզհետէ իմացուած եմ Ձեզ:

Իրաց վիճակին մէջ Պատրիարքի եւ տեղական աշխատութիւններս միայն չ'էին բաւականանար կատարեալ անդորրութեան եւ ազգին բարեկեցութեանը, որով պէտքն զգացի այն արտօնութիւնը ըստանալ քոմիթէներու հետ եւս բանակցելու, նոցա մօտ մարդ խրկելով որ հարկ եղածն խօսի եւ նոցա դիտողութիւններն ստանայ. ինչ որ արտօնուեցայ, եւ անարժանաբար իբր ազգին ծանօթ անձնաւորութիւններէն մին, այն յոյսը ունեցայ որ Պատուարժան Դաշնակցութիւնն եւս սիրայօժար պիտի ընդունի իմ կողմանէ խրկուած պատուիրակութիւնը եւ իմ առաջարկներուս պիտի ունենայ գնէ:

Սոյն վիճակէն օգտուելով, թէ' Դաշնակցու-

թեանդ առաջարկներն եւ թէ' ազգին ցաւերը շարունակ եւ մաս առ մաս ներկայացուցի ուր որ անկ է, եւ գոհ եմ ըսել թէ, եթէ ո'չ ամբողջովին, այլ մասամբ մը, փոքր ինչ շնորհներ ստանալու կարողացայ եւ այն չափ ին մէջ մտցուցի գործը որ հետզհետէ ազգին հանդարտութեամբը եւ Օսմանեան կառավարութեան բարեհաճութեամբը քիչ քիչ հայ ազգը պիտի ստանայ միայն Վեհապետէն իւր պէտքերն ու բաղձանքները, ինչ որ մօտէն գիտեմ եւ նոյն հաւաստիքն առած եմ։

Արդ՝ կրկին անգամ Դաշնակցութեանդ կ'աղաչեմ որ լաւ նկատողութեան առնէք ըսածներս, քանզի անկեղծօրէն կ'ըսեմ թէ հայոց փրկութիւնը եւ հանգստութիւնը դարերէ 'ի վեր Թուրքիոյ մէջ պահպանուած են, եւ թէ Վեհ. Սուլթանը այլեւայլ առիթներով թէ' ինձ եւ թէ' Ս. Պատրիարքին յայտնած է իւր բարի տրամադրութիւններն առ հայ ազգն։ Արդէն իւր տուած հրամաններուն ականատես եղած ենք եւ անընդհատ հրամաններ տակաւին կը խրկէ նախարարաց եւ կուսակալաց, որպէս զի հայ տառապեալ ժողովրդեան նեղութեան տեղի չի տրուի։

Առ այժմ այսչափս ըսելով անշուշտ հետզհետէ առիթն պիտի ունենամ Ձեզ այսուհետեւ եւս այն ամէն ստացուած շնորհներն ուրախութեամբ աւետել որուն ընդունելութեանը աջակից եղաւ մեծաւ մասամբ Պատկառելի Դաշնակցութիւնդ։

Ընդունեցէք, Մեծարգոյ Տեարք, իմ նորոգ յարգանացս նուէրը։

(Ստորագրած) ՅԱՐՈՒԹԻՒՆ Գ. ՏԱՏԵԱՆ

Խմբագրութիւնը, իբր պատասխան բոլոր այդ դիմումներուն, շատացաւ դիտել տալով թէ ամուլ և ապերախտ աշխատանք մըն էր բանակցութեան խնդրին լուծումը փնտռել Դաշնակցութեան գերագոյն մարմնին վճռով գծուած սահմաններէն դուրս։

1898-ի դեկտեմբերի վերջերը Տրդատ պէյ արդէն հրաման ստացած էր Պոլիս վերադառնալու։ Մեկնելէն առաջ Խմբագրութեան միջոցով խնդրեց ամիս մը ևս գոնէ երկարել եռամսեայ պայմանաժամը, որպէսզի ինքը միջոց ունենար ուր որ անկ է հասկցնելու Դաշնակցութեան որոշումին անդառնալի ըլլալը, և անոր համեմատ հարկ եղածը տնօրինէր։

Այդ առաջարկը ընդունելի դատելով՝ վերջնական պայմանաժամ որոշուեցաւ 1899-ի մարտ 11, շաբաթ օր։

* * *

Այդ պայմանաժամը լրանալուն, որովհետև Թիւրք կառավարութեան կողմէն — ինչպէս դիւրին էր նախատեսել — ոևէ գոհացում տրուած չէր Դաշնակցութեան առաջարկած չորս նախնական պայմաններուն, Արևմտեան Բիւրօն փութաց զեկուցանել Յարութիւն փաշային պաշտօնական յարաբերութիւններու խզումը Դաշնակցութեան և Թիւրք կառավարութեան պատճիրակներուն միջև, հետևեալ ծանօթագրով.

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

4/16 մարտ 1899

Յարութիւն փաշա Տատեանին, Կ. Պոլիս

Մեծարգոյ պարոն,

Ներկայիւս կը յայտնենք ձեզ, որ ձեզ տրուած վերջնական պայմանաժամին լրանալու օրէն — որ է մարտ 11 (ն. տ.) — Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բոլոր յարաբերութիւնները ձեզ հետ կը համարինք խզուած, համաձայն 4-րդ յօդուածին Ընդհանուր Ժողովի Որոշմնագրին, որուն պատճէնը հաղորդուած է ձեզ մեր կողմէն 1898 հոկտեմբեր 25-ին։

(Կնիք Արեւմտեան Բիւրօյի)

Յարաբերութիւններու այդ խզումը Թիւրք կառավարութեան գործին չէր կրնար գալ և չեկաւ. իր սովորական քաղաքականութեամբ անվերջ ձգձգելով այդ գործը, սուլթանը կը յուսար „ժամանակ վաստկիլ“ և իր խելքով Եւրոպան ու հայերը խաբել։ Եւ ահա Յարութիւն փաշային միջոցով նորէն դիմումներ եղան Խմբագրութեան մօտ, որ անգիտանայ Ընդհանուր Ժողովին վճիռը և անպաշտօն կերպով շարունակէ յարաբերութիւնները։

Խմբագրութիւնը անպատասխան թողուց այդ նամակները և վերջ մը դնելու համար այդ թղթակցութիւններուն, մայիս 26-էն սկսած ետ դարձնել սկսաւ բոլոր այդ կարգի գրութիւնները։

ԹԵՐԹՕՆ

„ԿՌԻԵ՛ՆՔ“

(ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ՆՈՅՆԱՆՈՒՆ ԳՐՈՒԱԾՔԻՑ)

—

„Խոր մխենք մեր մատները հայրենիքի դեռ եւս տաք դիակի վէրքերի մէջ: Թող դրանց տեսքը հայրենասիրական ատելութիւն բորբոքի մեր սրտերի մէջ: Ոչինչ չմոռանանք, երբեք, ո՛չ մի բոպէ... Կարող է ուղիղն մոռանալ նրան, որ խայտառակեց իր մօրը: Այս սոսկալի յիշողութիւններն են... մեր միակ սուրբ, արիւնաներկ մասունքները: Խնամքով պահպանենք նրանց՝ որպէս մեր տանջուած ծնողների նշխարներ, ծնողների, որոնք մեզ մի միակ ժառանգութիւն են թողել — վրէժի երդումը“...

Փ. ԼԱՍՍԱԼ

I

Մռայլ, սրտաճաք աշուն. անժամանակ բուք ու ձիւն և դրանց մէջ՝ մի պա՛ղ դժոխք...

Պատերի տակ, աղբանոցներում, ճանապարհների վրայ, ամէն տեղ, ուր կարելի է ոտք դնել՝ չխախտելով սեփականատիրոջ իրաւունքը, սողում է մի ուշակորոյս, մի զարհուրելի բազմութիւն: Շարժւում են հազարներով. մարդկանց մի հեղեղ է դա, որ յորձանքներ տալով, աջ ու ձախ արիւնոտ հետքեր դրոշմելով, գնում է, գնում... միշտ դէպի առաջ, անդադար, առանց յետ նայելու...

Ո՛րքան մեծ է եղել անբախտութեան հայրենիքը: Փախչում են օր ու գիշեր, կոտորւում են ճանճերի պէս, բայց հոսանքը վերջ չունի։ Տեղափոխւում է մի ամբողջ աշխարհ։ Եւ ինչպէս Իսրայէլի զաւակներին լուսեղէն ամպն էր առաջնորդում անապատների մէջ, իսկ այս ժողովուրդը նշան չունի վերևից։ Ո՛չ մի հատ բարեհաճ աստուածութիւն չի մնացել նրա համար: Զուր էր նա հազար տարիների ընթացքում խնկի ծխով մրկացրել իր ցուրտ, անզգայ երկինքը: Առջևից գնացողների դիակները հետագաների ուղեցոյցներն են...

Ու քայլում է նա դիակից դիակ, ապուշ, յամառ

որպէս մահը... Ոչ մի հեռաւորութիւն չի սարսեցնում նրան. հիւսիս, հարաւ, արևմուտք թէ արևելք՝ միևնոյն են. թշնամի ու բարեկամ նա չի ջոկում: Ամբողջովին տկլոր մնա է նա, ամբողջովին հեծեծանք: Դրանով և միմիայն դրանով է նա ուժեղ, դա է պողպատ հաղորդել նրա արիւնոտ ոտներին, դա է քարացրել նրա ճակատը: Այլ ևս ցաւ չի զգում նա. ոչ միայն երկինքը կամ երկիրը, այլ մինչև իսկ մարդն էլ չի կարող այսուհետև մի տանջանք հնարել, որ անծանօթ լինի այդ ահագին ժողովրդին...

Թիւրքահայը... Դա միայն մարդկային անուն չէ, ոչ էլ նահատակ է նշանակում: Դժբախտութիւնների մի անհուն ծով է պարփակուած այդ մի հատ բառի մէջ:

Շարժւում է այդ ծովը, երկրից երկիր է թափառում: Ինչու: — Կարծես՝ մարդկութիւնը փորձելու համար: Կարծես հին աստուածներից մէկը վեր էր կացել հազարամեայ քնից, որ իմանայ, թէ այժմ ինչպէս է մարդը մարդու համար. արդեօք նա սովորե՞ց սրբել իր եղբօր արտասուքը՝ թէ՞ դարձեալ հինաւուրց գազանն է: Դրա համար էր, կարծես, որ նա աստծուն վայել առատաձեռնութեամբ՝ ողողեց Հայաստանի բարձրութիւնները աղէտների հեղեղով: Բիբլիական աշխարհը ոչնչացնելու համար բաւական էր մի ջրհեղեղ, որ տևեց քառասուն օր, քառասուն գիշեր: Իսկ Հայաստանի ժողովուրդը մարմնացած թշուառութիւն դարձնելու համար թոյնի, լեղի հեղեղը տարիներ տեղաց: Ու երբ ամէն չափ ու սահման անցաւ, այդ ժամանակ պատրուեցին վշտի անդունդները և հոգեվարքը բազմութիւնը գնաց իրեն ցոյց տալու աշխարհին:

Անողոքմ փորձ... Նա կատարուեց: Բայց հետևա՞նքը: — Թող պատմեն քրիստոնեայ ժանդարմների և ոստիկանների վոհմակները, թող ցոյց տան, թէ ինչով էին լաւ խաչի քիւրդերը կիսալուսնի համիդիականներից: Թող պատասխան տան նրանց գլխաւորները, մարդիկ, որոնց ձեռքումն է աշխարհի բախտը, լինեն դրանք գահեր լիզող մինիստրներ՝ թէ „Աստծու ողորմութեամբ" թագաւորներ: Դրանք պարտաւոր չեն հաշիւ տալ և ինչ հարկաւոր է: Բաւական է և այն, որ այդ օրից բուն գայլերը դժգոհ են իրենց արհեստից և նախանձոտ աղաղակներ են արձակում դէպի երկինք, աղաչելով քիչ մարդկային գայլութիւն աւելացնել իրենց ատամներին, իսկ բորենիները խեղդւում են յուսահատութիւնից, որովհետև տեսան, որ երբեք, երբե՛ք չպիտի կարողանան դիակներ յօշոտել մարդու նման...

II

Մենակ էի իմ սենեակում:

Խաւար ու մառախլապատ երկինքը դրսում ողբում էր իր ցուրտ քամով ու մանր անձրևի շիթերով:

Բայց սենեակիս հաստ պատերը չէին կարողանում ծածկել աչքիցս հայ գաղթականների հետ շարժւող դժբախտութեան ծովը, որի կոծանքը հասնում էր ականջիս՝ խեղդելով աշնան տրտում ողբը: Ամէն ինչ այդ գաղթականների մասին էր խօսում. օդի մէջ նրանց արտասուքների աղն էր տարածուած:

Թշուառնե՛ր... Մեր վրայ էր նրանց յոյսը, բայց ի՞նչ էինք մենք: — Օտարներ, վատ, անհոգի օտարներ: Մերկութիւն չէինք ծածկում, քաղցր խօսք չունէինք վշտից խեղդւող հայրերի ու մայրերի համար: Արիւնը դեռ հոսում էր մեր եղբայրների վէրքերից. դա մեր սեփական արիւնն էր, չէ՞. բայց մենք սպեղանի չունէինք... Մեր շէմքերի մօտ մեռնում էին անտէր: Այլևս չկար քիւրդը իր նիզակով, բայց նրա տեղը բռնել էր հազարապատիկ քստմնելի քիւրդութիւնը — եղբօր քարասրտութիւնը...

Օ՜... Հարիւր հազար որբեր, այրիներ, բռնաբարուած կոյսեր դնում էին բևեռից բևեռ: Բայց մեզ ի՞նչ փոյթ... Սուգ չարինք աւերուած Հայաստանի համար. մեր երեկոյթները դարձեալ շքեղ էին, մեր պարերը դադար չառան: Քիչ ամօթ էր հարկաւոր անթիւ նահատակներին պատուելու համար. նրանք գալիս էին արեան դաշտից, նրանց վիրաբոյժներ, խնամք, գթութեան քոյրեր էին հարկաւոր: Բայց մեզ ամօթ չէր տրուած: Հայ տիկինը շարունակեց պարել, թռչկոտալ, մինչդեռ նրա քոյրը մի կտոր լաթ չունէր՝ իր կրծքի վրայ մեռնող երեխային ծածկելու համար: Հայ մեծատունը ուտում, տրաքւում էր, իսկ նրանից երկու քայլ հեռու՝ հայաստանցի հօր աչքի առաջ սովամահ էր դառնում մի ամբողջ ընտանիք...

Հրեշայի՞ն փաստեր... Նրանք կատարւում են ամէն րոպէ, որպէսզի ցոյց տան, թէ ի՞նչ ահռելի խորութեան է հասնում մեր անբարոյականութիւնը: Մենք զզուելի էինք: Այնքան քարացել էինք, որ նոյն իսկ չէինք նկատում, որ Բօսֆորի ափերից, արիւնոտ գահի բարձրութիւնից, մեզ է նայում 19-րդ դարի ամենագարշելի բորենին ու հրճւում՝ տեսնելով, որ մենք շարունակում ենք նրա սպանութիւնները...

Պակասը լրացրեց քրիստոնեայ համիդիականութիւնը: Պաշտօնական Եւրոպան արտաքսում էր հայ փախստականներին: Նա մեծ տագնապի մէջ էր. կարծում էր, որ եթէ իր դուներում թափառող ուրուականները մի քանի փշրանք ստանան իբրև ողորմութիւն, իսկոյն առիւծներ կը դառնան ու կը գնան սուլթան Համիդի հոգին հանելու: Իսկ դա սարսափելի դժբախտութիւն կը լինէր այնքան մեծ, այնքան լուսաւորուած Եւրոպայի համար: Լիրբ մարդասպանին կատարեալ ազատութիւն էին տուել Հայաստանում և այժմ էլ պէտք էր պահպանել նրան: Թող կորչի հայութիւնը, միայն թէ պայծառ մնայ Համիդի արևը իփառս մարդկութեան: Եւ օսմանեան մարդասպաններից հարիւրապատիկ վատ, զզրելի մամուլը Եւրոպայի բոլոր անկիւններում ծաղրում էր մեր դժբախտութիւնը: Տարտարոսը սառսռում էր մարդ անունով հրէշի արարքներից: Թիւրքաց Հայաստանը՝ ծիծաղի առարկայ... Դիւական քրքիջներով դիմում էին մեզ և, մատնացոյց անելով մեր շուրջը թաւալւող դիակները ու ծաղրելով զոհի լացը, անէծքը, կանչում էին. „Ահա՛ Բերլինի 61-րդ յօդուածը..."

Զարագործ աշխարհը ինձ տանջում էր մենակութեանս մէջ: Այնքան կրակ ու ցաւ ունենալ և մատնուել տիեզերքի առելութեա՞ն... Գոնէ մեր արիւնը լուեցնէր, գոնէ չհայհոյէին մեր փտող վէրքերը... Պըժգալի տօնախմբութեամբ են առաջնորդում մեզ դէպի գերեզման: Յանցաւորների դժոխային հարսանիք, որի մէջ ոչնչանում են տասնեակ հազար դժբախտ մարդիկ:

Յանցաւոր էին ամէնքը: Սպանում, թաղում էին ոչ միայն թիւրքերը. դրանց ահռելի յանցանքին հաւասար չափով մասնակից էր ամէն մէկը, որ կարողութիւն ունէր օգնելու, բայց չէր օգնում: Ամէն մի բարեկեցութիւն, որից

օգուտ չունէր Թիւրքահայը իր օրհասական բոպէներին, զգալի էր. ի՞նչ զանազանութիւն կայ կողոպտողի և նրա մէջ, որ տեսնում է կողոպտածին ու անհոգ է մնում. . .

Ահա իմ սենեակի դիմաց երկու պատուհաններ են լուսաւորուած և ես տեսնում եմ սովորական պատկերը: Պառաւ դրացուհիս նստած է մեծ սեղանի յետևը և լուռումունջ լափում է մի հնամաշ գիրք: Նա մեղք է համարում առանց աղօթքի անկողին մտնել. և կլոր աչքերը, որոնք յառած են քթի ծայրին նստած ակնոցների յետևից, խորին բաւականութիւն արտայայտող ժպիտը, — ամէն ինչ վկայում է, որ այս անգամ էլ աղօթքը նրա համար հրաշալի, անփորձանք քուն է պատրաստում: Անվրդով ծուլութեամբ նայում է քնաթաթախ դեղին կատուն, դրացուհուս մշտական ընկերը և սիրելին, որ միշտ կուշտ է, իւղի մէջ լողում է: Բախտաւոր կենդանին էլ, կարծես, հասկացել է գրքի հրաշագործ յատկութիւնը ու ինքն էլ խնդրում է նրանից գիշերային հանգստութիւն, անուշ քուն:

Ի՞նչ անարդար, վրդովիչ տեսարան: Այստեղ չի մտել նոյնիսկ մի թոյլ շշուկ այն հեծեծանքներից, որոնցով Թիւրքահայը լցրել է աշխարհը. այստեղ հառաչանք պիտի լինէր խեղճերի համար, այստեղ կատուի չափ բախտաւոր պիտի լինէր գոնէ մէկը այն անհայր ու անմայր որբերից, որոնք մրջիւնների պէս սողում են արիւնով թրջուած հողերի վրայ. . .

Բայց մի՞թէ միայն դրացուհիս է մեղաւոր: Իսկ ես. . .

III

Ես պակաս յանցաւոր չեմ: Ահա սեղանիս վրայ դրուած ճրագը լուսաւորում է իմ գործերը: Ընկած է իմ կիսատ աշխատութիւնը, որ արդէն մի մեծ տետրակ է կազմում, իսկ նրա մօտ մի ամսագրի նոր գիրքն է, որ այդ երեկոյ էի ստացել իմ ընկերից: Օրուայ ամէնախոշոր նորութիւնն է այդ ամսագրի մէջ տպուած մի ահագին յօդուածը, որին քաղաքակիրթ աշխարհը անհամբեր սպասում էր երեք ամսից իվեր: Մի հռչակաւոր գրող այդ մեծ, մանրամասն ուսումնասիրութեան մէջ բացատրում էր, թէ ինչ է գեղարուեստը և ինչ պիտի լինի: Մինչև յօդուածի տպուելը անհամբերութիւնից տրաքւող շատ մարդիկ, հարիւր ու մի միջոցներ գործադրելով, իմացել էին հռչակաւոր գրողի հիմնական մտքերը: Այդ առիթով գրուել էր շատ բան, եղել էին կրակոտ վիճաբանութիւններ, բայց խօսք ու զրոյցը այսուհետև պիտի սաստկանար, երբ ամբողջովին հրատարակուել էր հռչակաւոր յօդուածը: Իմ ընկերը շտապել էր ամէնից առաջ ինձ ուղարկել ամսագիրը և խնդրել էր վերադարձնել վաղ առաւօտեան:

Ինձ առաջուց էր յայտնի այդքան աղմուկ հանած յօդուածի բովանդակութիւնը: Շատ գեղեցիկ կերպով էր բացատրում հռչակաւոր գրողը, թէ ինչ բան է գեղարուեստը մարդկութեան համար: Սիրտ ճաշակ, համ ու հոտ, վայելչութիւն, նրանց կրթական նշանակութիւնը, հրաշագործ ազդեցութիւնը. . . Դրանք կարող են մարդու կրօնը դառնալ, կերպարանափոխել աշխարհը, մօտեցնել մարդուն աստուածութեան. . .

Դատարկ խօսքե՞ր. . .

Դարերի ընթացքում գրիչն ու վրձինը հրաշալի դասեր են տուել: Բայց ի՞նչ օգուտ: Այդ Ռաֆայէլները, Շէքսպիրները, Գեօթէները քանի՞ արիւնարբու հրէշների ծնունդն են արգելել նոյնիսկ Եւրոպայի մէջ՝ թէ դահերի վրայ և թէ դահերի ոտների մօտ. . . Մարդը կարողացաւ նոյնիսկ հանճարներին սպանել: Հանճարները փակւեցին ոսկի պատեանների մէջ, դարձան սենեակի զարդեր, իսկ նրանց մէջ ապրող մարդը սառնասրտութեամբ ականատես եղաւ, թէ ինչպէս վեհափառ սուլթանի զինուորը սւինով ծակում է հայ կնոջ փորը, հանում է արգանդը և նրա մէջ թաթռացող երեխային զարկում է քարերին. . .

Իմ ծանօթներից մէկը ոսկի շքեղ կազմի մէջ է պահում „Թշուառները". ամէն օր ուխտաւորի նման սրբում, մաքրում է, դիտում է հրաշալի նկարները, թուղթը, կազմը. նա պատրաստ է իր կեանքի կէսը տալ, միայն թէ հաւատան, որ Հիւգօն նրա կուռքն է: Նրա պատերը մի ամբողջ պատկերահանդէս են ներկայացնում, և նա ամէն տան մէջ հռչակուած է իբրև գեղարուեստի սիրահար, իբրև մի մարդ, որ առանց հացի իսկ կարող է ապրել, միայն թէ հիացմունքով դիտելու բան ունենայ իր առջև:

Երէկ ես այդ ծանօթի մօտ գնացի, որպէսզի Թիւրքահայերի համար ճար խնդրեմ: Նա սաստիկ յուզուած էր. քիչ էր մնում հեկեկայ փոքրիկ երեխայի նման: Ի՞նչ էր պատահել: Երևակայեցէք: Նա մի թանկագին պատկեր էր գնել. մասնագէտների մի ամբողջ խումբ որոշել էր, թէ ինչ շրջանակի մէջ պիտի լինի պատկերը, պատի ո՛ր կողմից պիտի կախուի, ինչ տեսակ լուսաւորութիւն է հարկաւոր ցերեկը և երեկոյեան: Երեկոների հարցը վճռուած էր. արդէն ընտրուած էին մի քանի տեսակ լամպաներ, մի շարք փորձեր էին կատարուել. իսկ ցերեկուայ համար պէտք էր մի փոքրիկ պատուհան բաց անել առաստաղի մէջ, և ահա դրսում գործում էին արհեստաւորները: Բայց ցաւն այդ չէր: Պատկերի շրջանակը հիանալի էր. նրան շինող արհեստաւորը շատ լաւ վարձատրութիւն էր ստացել և ոչինչ ջանք չէր խնայել. բայց նրա գործիքը մի փոքրիկ անկարգութիւն էր արել. շրջանակի վերին անկիւններից մէկը քիչ վնասուած էր: Այդ պատճառով էր ծանօթս այնքան տրտում ու յուսահատ: Տպաւորութիւնը փչանում էր, կանչում էր նա անդադար և խնդրում էր ինձ լաւ դիտել, հասկանալ, թէ որքան դիւթիչ ճշգութիւն կայ պատկերի մէջ:

Պատկերը ներկայացնում էր ձմեռնային տեսարան: Սաստիկ բուք է. ձիւնապատ դաշտում գնում է մի գզգզուած, ոտաբոբիկ կին. նա գրկում սեղմել է փոքրիկ երեխային, աշխատում է ազատել նրան դաժան եղանակից: Բայց զուր են մօր ջանքերը. նրա տանջուած դէմքը կատարեալ ուժասպառութիւն է ցոյց տալիս, իսկ բուքի մէջ պտտող ագռաւները վկայում են, որ դժբախտութիւնը անխուսափելի է, որ այդ երկու մարդը դիակներ են. . .

— Այս կողմից նայեցէք, ասում էր ծանօթս արտասուք դրդւող խանդաղատանքով: — Երանգներ չեն կտաւի վրայ, վրձինը ոչինչ չի հնարել, նա միայն օրինակել է: Այդ անպաճոյճ իրականութիւնը շշմեցնում է մարդուն. գեղարուեստը մի կտոր կտաւի վրայ հրաշակերտել է մի ամբողջ անհուն պատմութիւն. . . Բայց ուժեղ տպաւորութեան վնասում է շրջանակի այս դժբախտ անկիւնը. կոպիտ, անհոգի գործիքը մտել է իմ ու իրականութեան մէջ և չի թողնում լիուլի սքանչանալ. . . Ո՛չ, պէտք է դէն շպրտել այս շրջանակը և նորը շինել տալ. . .

Ես նայեցի փողոցին և յանկարծ բռնեցի ծանօթիս ձեռքը ու տարայ նրան դէպի պատուհանը: Դիմացի տան պատի տակ դողում էր գաղթականների մի խումբ: Ահա իրականութիւնը... Եթէ մարդկային դժբախտութեան մի թոյլ պատճէնը ոսկի շրջանակի է արժանանում, ինչ մեծարանքներ պէտք է անել սրան, այս իսկականին, որը ընդօրինակել չի կարող ոչ մի հռչակուած ճարտար նկարիչ: Խնդրեցի ոչ թէ մեծարանք, այլ օգնութիւն: Դրանք մուրացկաններ չեն, ասացի ես և ձեռքս մեկնեցի դէպի հիւսիսային պատը, ուր կախուած էր Գարիբալդիի մեծ պատկերը: Ես լուռ էի, բայց ծանօթս ինչպէս հասկացաւ, որ ես ասում եմ, թէ այդ պատկերի հետ կապուած գաղափարը — ահա այն թշուառութիւնն է առաջացրել: Ազատութիւն կանչողը, ասում էի ես, միշտ այսպիսի դահլիճների զարդարանք չի կազմում, այլ այնպէս քարշ է ընկնում պատերի տակ և թողնում իրենից յետոյ միայն մի տկլոր, ցուրտ գերեզման...

Ծանօթս — ես այդպէս էլ սպասում էի — չտաքացաւ այդ իրականութիւնից: Ինչ-որ խօսքեր փնթփնթաց նա, ինչ որ քարային՞ անմիտ արտայայտութիւն ուեց իր աչքերին: Նա աշխատում էր ազատուել ինձանից. շրջանակի անկիւնը, մի չնչին, հազիւ նկատելի ճեղքուածք՝ այդ րոպէին նրան շատ աւելի մտատանջութիւն էր պատճառում, քան փողոցում մեռնողները: Ես հեռացայ ձեռնունայն...

Այսպէս է կրթում մաքուր, սուրբ գեղարուեստը: Ու յիշեցի ես Գերմանիայի երիտասարդ վեհապետին: Նա էլ նկարում է, գոյները նրան էլ ծառայում են ճաշակ, գեղեցկութիւն արտայայտելու համար: Բայց ինչ: 1896-ի օգոստոսին՝ Կ. Պոլսի փողոցներում հոսում էր երկու հազար հայերի արիւնը և այդ իսկ միջոցին այդ թագակիր փարիսեցին իր պատկերն էր ուղարկում մինչև մազերի ծայրը արեան մէջ խրուած Աբդիւլ Համիդին՝ ինչպէս հոգեկից եղբայրութեան...

Ո՛չ, միայն իրենք իրենց խաբող թշուառները կարող են գթութիւն սպասել գեղարուեստագէտ գայլերից... Մեր ժամանակներում ամենաքստմնելի բարբարոսութիւններին ուղեկցում են Բէթօվէնի նուագները, Հէյնէի սիրերգները, եկեղեցու զանգակները, սեղանի խունկը, շողոքորթ քուրմերի օրհնութիւնները: Բոլոր սրբութիւնները ոճիրի կողմն են: Ոչ մի վարդ, ոչ մի սոխակ, ոչ մի լուսնեակ մեր-ցաւին չի օգնի: Երգե՞նք: — Ոչ, ոտնանք, երկի՛նք հասցնենք մեր զայրոյթը. չէ՞ որ սորուկն էլ գիտի կատաղել...

Թող վայրենի՛ լինեն մեր աղաղակները, թող նրանց մէջ միևնոյն դառն, կոպիտ նօտան լինի: Մեր ցաւը այսպէս է և ուրիշ կերպ չենք կարող լինել: Խօսենք հառաչելով, սուգը թող երբե՛ք չվերանայ մեր կրծքից: Մտցընենք մեր ծոցի մէջ Հայաստանի արիւնաներկ սարերը և միշտ, ամէն րոպէ նրանց նայենք: Կործում ենք, և խեղճ սոխակները չպիտի աղատեն մեզ. զզւենք սիրոյ երգերից — Հայաստանում մի հատ անմեղ կոյս չի մնացել: Մեր թաղումն է կատարում պաշտօնական Եւրոպան. չծիծաղե՛նք, այլ կրակածենք մեր երակների մէջ: Թող ամբողջ հայութիւնը մի աղաղա՛կ դառնայ, միանմա՛ն, տաղտո՛ւկ, անվե՛րջ աղաղակ... Ամէն մի նուիրական, սուրբ վայրում վառենք մեր խունկը — վառօդը... Նրա բոցերի մէջ թող հայը մսի իր գրիչը և ներբողներ գրի վրէժի սքանչելի աստծուն... Հայ արհեստաւորը թող այդ սեղանից վերցնի կրակը, տէրտէրը իրաւունք չունենայ իր բուրվառի մէջ ուրիշ ծուխ պահել: Հայ պատանին թող դրանով պնդացնէ իր կուրծքը, մայրը օրօրոցում թող անդադա՛ր ճաշակել տայ իր երեխային այդ սրբազան ծուխը: Ամէն տեղ թող վառօդի անունը փառաբանուի. աղօթե՛նք վառօդին, երդուե՛նք վառօդի վրայ... Վրէ՛ժ, վառօ՛դ... Առանց այս ձայնարկութեան հայը չի կարող ապրել...

Ս. ԹՆԻԵՐԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

„Ալատամ"-ից 600 ռուբլի, Մ. քղ.-ից 630, Կայծիկ խ. 215, Եզիպտացի խ. 100, Դերսիմ խ. 50, Զաւէն խ. 50, Գինեվայր 40, Ճառից, Տ. Ս.-ից եւ Տ. Թ.-ից 25: Գումար 1710 ռուբլի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„Հիւսիսակերտ"-էն 1177 Փրանկ. — „Յոյս"-էն 200 ռուբլի. — Հավամայէն՝ Լեռնային եւ Բերղապաշ մէկ-մէկ դօլար, — Լօնտոնի կոմիտէի միջոցով՝ Գ. Պ., Ա. Ե., Բաբգէն, Գաւազան մէկ-մէկ դօլար: Անվէրսէն Ա. 5 Փրանկ: Գումար 1747 Փրանկ 75 սանթ.:

„ՑԱՐՕՆ" Կեդր. Կոմիտէն՝

Ծիծնակաւտեցի Ռուբէն 200 ղաճեկան, Ց. Վ. Խ. Մ. Ս. եւ Մ. 187, Զրար գիւղի Աւլից 180, Ղարամէշ գիւղի Ս. 100, Վարդ 100, Վնազ եւ Ցարթ 60-ական, Զաքար 45, Կարմիր գիւղի Կարապետ 40, Բաղդ 35, Գրիգ 30, Առաքել, Նեւս 20-ական, Ղազար 19, Դն. 3, Օրիորդ 2 ու կէս: Եփրատ գիւղէն 240, Աւազ գիւղէն 119, Զրվէժ գիւղէն 107, Զոլակ գիւղէն 107, Հարթ գիւղէն 100: Համագումար 1774 ու կէս. ղաճեկան:

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կոմիտէն՝

Աղքատասէր Անուշեան 40 ղաճեկան, Մեզ, Հեղինէ, Զարուհի, Բանվարաս 5-ական, Փայլակ 10,50, Արսլանեան խ. 10,50, Պարոյր 6,25, Լուսին 6,25, Ռամիկ եւ Ոսկի 3-ական:

Որոտում խ. (փետրուար) 20 ղաճեկան, Կածառ 10. 50, Համ-իմ 6. 75, Աղեղ 6. 25, Թուր, Սուր, Նիզակ 4-ական, Շանէն 5. 25, Արշաւիր խ.-էն Պարոյր 6. 25, Ոսկի եւ ծաղիկ 3-ական:

Ա. քաղաքի Արամայիս խ.-էն՝ Կայր, Մայր, Երը, Առը, Գառը, Նայգ, Սիմ, Այբ 5-ական: ԱԾԽԱՀԱՆՔԷՆ՝ Թուր 3 օսմ. ոսկի, Նիզակ եւ Վրէժ 80-ական ղաճեկան, Վահագն 120, Վարդ 20, Ժիրայր 6, Վահան 5: ԲԼՈՒՐ քաղաքէն 120: Համագումար 3 օսմ. ոսկի եւ 643, 50 ղաճեկան (ողջ):

ՎՐԻՊԱԿ. — „Դրօշակ"-ի 1899 № 1-ի Ածխահանքի ցանկին մէջ սխալմամբ տպւած է Թուր 10 ղաճ., պէտք է ըլլար Սուր 10 ղաճ.: Նոյն թւին նոյն ցանկին գումարը ողջ դրամ է եւ ոչ փուտ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կոմիտէն՝

ԼՕՌԷՆՍԻ Կոմիտէէն՝ 1899 մարտ 5-ին զէնքի համար հանգանակուած գումար հետեւեալ անձերէն — „Դրօշակ" 10 դօլար, „Հնչակ" 7, Հ. 6, Վ. Ծ. Վ. Ս. 5, Գ. Պ., Զուլում, Մուրատ, Կարմիր, Պէկտար, Գ. Գ., Միայն ծով, Ճերմակ, Արծիւ, Զանկալար 5-ական, Խ. Կ. 4, Ծովառ Ք., Ռաշիտ, Մ. Կ., Ա. Վ. 3-ական, Մ. Գ., Կ. Ա., Ա. Ա., Կ. Կ., Ա. Արշակ, Ոմն, Մ. Ս., Պ. Ս., Ա. Ե., Բ. Ա. 2-ական, Ե. Վ., Պ. Տ., Խ. Գ., Բ. Ոմն, Ոմն, Ա. Մ., Հ. Զինուոր, Մ. Ս., Գ. Պ., Ոմն, Մ. Հ., Թ. Հ., Ս. Հ., Ց. Ճ., Յ. Պ., Ցարութիւն, Տէօվէթ Տիւշկինի, Ա. Թ., Սարգիս, Ց. Ս. մէկ-մէկ դօլար, Կտաւ, Կարողչէք, Ոմն, „Շարժում", Զաւէն, Զարուհի 50-ական սէնթ, „Միութիւն" 30, Երեք ընկերք 32, Ասեղ, Դերձան 25-ական: Գումար 138 դօլար 12 սէնթ:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ ասցէով՝
Rédaction du **Droschak**, Genève (Suisse)